



Ե Ր Կ Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

## Խմբագրական

### 96 տարի անց. Ժամանակները փոխվում են, մարտահրավերները՝ ոչ

1918 թվականի մայիսի 28-ին, Հայոց ցեղասպանությունից ընդամենը 3 տարի անց հռչակվեց Հայաստանի Առաջին Հանրապետությունը: Մայիսյան հերոսամարտերից՝ Սարդարապատից, Բաշ Ապարանից, Ղարաբաղից հետո ծնունդ առավ հայկական առաջին հանրապետությունը: Վերականգնվեց շուրջ 6 դար առաջ կորցրած անկախությունը:

Ըմբռնելու համար Մայիսի 28-ի պատմական մեծ նշանակությունը՝ անհրաժեշտ է աչքի առաջ ունենալ այն ծանր պայմանները, որոնց մեջ տառապել է կենաց ու մահու հերոսական կռիվներ է մղել հայ ժողովուրդը: Այդ ճգնաժամային պայմանների մեջ կատարվեց հրաշքը: Դաշնակցությունը կարողացավ համախմբել եւ գոյապայքարի ճակատ նետել հայության ողջ կենդանի ուժերին: Իրողություն, որը բուլշեփկյան ժամանակներից մինչ օրս՝ քաղաքական դրդապատճառներով փորձում են անտեսել:

1918-ի հունիսի 4-ին Բաթումում ստորագրվեց հայ-թուրքական հաշտության պայմանագիր: Նորակախ Հայաստանը, համաձայն այդ պայմանագրի, ստեղծվում էր 11 հազար քառակուսի կիլոմետր տարածության վրա: Սակայն երկուսուկես տարվա ընթացքում Առաջին Հանրապետության դաշնակցական կառավարությունը Հայաստանի տարածքը դարձրեց 70 հազ. քկմ՝ ունենալով բազում արտաքին թշնամիներ, ցեղասպանության դեռ բացված սպի:

Հանրապետությունը սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակում էր, քայքայվել էր տնտեսությունը, չէին աշխատում պղնձի հանքերն ու գործարանները: 1918-ի վերջին եւ 1919-ի սկզբին սովյակների թիվն անցնում էր կես միլիոնը: Սովից ու համաճարակներից մահացել է 180 հազ. մարդ, հիմնականում՝ արեւմտահայ գաղթականներ: Սովի ու համատարած բարոյալքության պայմաններում իշխանությունն ստանձնած դաշնակցական կառավարությունը կարողացավ ոչ թե աճ արձանագրել որոշ ոլորտներում, այլեւ իրական հարթակի վրա արձանագրել գրեթե բոլոր ոլորտներում. հաստատվեց անվճար կրթական համակարգ, բացվեցին համալսարաններ, ապահովվեց ներգաղթ, թե արտաքին, թե ներքին քաղաքականության մեջ արձանագրվեցին բազում առաջընթացներ, եւ, որ ամենակարեւորն է, հավատ եւ հույս ներշնչեց սեփական երկրում սեփական ճակատագիրը տնօրինելու նկատմամբ:

Հայաստանի Առաջին Հանրապետության իշխանությունների ամենանշանակալի ձեռքբերումը՝ դա Սեւրի պայմանագրի կնքումն է: Անշուշտ, պատմության ընթացքում Սեւրի պայմանագիրն ամենից հետաքրքիր էր գրավիչ դրվագներից է: Սեւրի պայմանագրով Հայաստանը ճանաչվում էր Ազատ ու Անկախ պետություն՝ ինչպէս Արեւմուտքի, այնպէս էլ՝ Թուրքիայի կողմից, միջազգայնորեն իրավական հարթությամբ ամրագրվեց Արեւմտյան Հայաստանի զգալի տարածքների պատկանելությունը Հայաստանի Հանրապետությանը:

Սիմոն Վրացյանը մի առիթով ասել է. «Առաջին Հանրապետության ծնունդը նման էր այն մանկան ծննդին, որին որեւէ մեկը չէր սպասում եւ չէր ցանկանում»:

Հայ ժողովուրդը պարզապէս կանգնեց փաստի առաջ, եւ ստեղծված իրավիճակում պետք էր ինքնակազմակերպվել ու ստանձնել երկրի ինքնապաշտպանության գործը:

Այդպէս եղավ նաեւ տասնամյակներ անց՝ Արցախյան գոյապայքարի տարիներին: Երկու պետություններն էլ ծնվեցին պատերազմական իրավիճակում: Ժամանակները փոխվում են, բայց մեր ժողովրդի առջեւ կանգնած մարտահրավերները մնում են նույնը:

96 տարի անց Առաջին Հանրապետության դասերը դեռ արդիական են: Այսօր էլ առկա են խնդիրներ մեր հարեւան երկրների հետ, այսօր էլ, ինչպէս 96 տարի առաջ, Ադրբեջանը հավակնություններ ունի Արցախի, Չանգեզուրի նկատմամբ, այսօր էլ Թուրքիայի հետ չլուծված են այն խնդիրները, ինչ 96 տարի առաջ առկա էին:

Սակայն մի բան ակնհայտ է: 96 տարի առաջ դաշնակցական իշխանությունը ապրում էր շնչում էր իր հասարակ ժողովրդի պէս եւ ժողովրդի համար, բարձրաստիճան պաշտոնյաներն ունեցվածքով չէին տարբերվում հասարակության մեծամասնությունից: Ի տարբերություն նորօրյա իշխանավորների՝ նրանց համար առաջնայինը երկրի պաշտպանությունն, ամուր պետականաշինության կերտումն էր, հանուն որի նրանք գոհում էին ամենաթանկը՝ որ ունենին:



### ՀՀԴ Արցախի կառույցի արձագանքն Աստանայում տեղի ունեցածի վերաբերյալ

**ՀՀԴ Արցախի Կենտրոնական կոմիտեն հայտարարություն է տարածել, որում անդրադարձել է Մայիսի 29-ին Աստանայում Եվրասիական տնտեսական միության անդամակցման համար Հայաստանի Հանրապետությանը ներկայացված կոշտ պայմանին:**

**Ձեզ ենք ներկայացնում հայտարարության տեքստն ամբողջությամբ:**

#### Հայտարարություն

Սույն թվականի մայիսի 29-ին Աստանայում Հայաստանին Եվրասիական Միությանն անդամակցելու կապակցությամբ Ղազախստանի Նախագահ Նազարբաեւի միջոցով հն-

չած կոշտ պայմանը մտահոգության առիթ է դարձել հայկական քաղաքական շրջանակներում:

2013 թ. սեպտեմբերի 3-ին Մոսկվայում Մաքսային Միությանն անդամակցելու մտադրության մասին ՀՀ Նախագահ Ս. Սարգսյանի կատարած հայտարարությունից հետո բազմիցս քննարկման առարկա է դարձել Արցախի մաս կազմելը Հայաստանի Հանրապետության՝ ցանկացած միությանն անդամակցելուն:

ՀՀ պետական շրջանակները եւ քաղաքական ղեկավարությունը երբեք չեն բացառել այն հանգամանքը, որ ՀՀ-ն ԱԴՀ-ի անվտանգության երաշխավորն է:

ԱԴՀ բնակչությունը բազմիցս է զգացել այդ երաշխավորության թե՛

տնտեսական եւ թե՛ ռազմական բաղադրիչները:

Ցավոք, ՀՀ-ն իր արտաքին քաղաքականության շրջանակներում առ այսօր չի հաջողել ԱԴՀ-ի անվտանգության երաշխավորի իր հանձնառությունը միջազգային շրջանակներին ընդունելի դարձնել:

Հայաստանի Հանրապետության, Արցախի Հանրապետության եւ հայ ժողովրդի անվտանգության առաջնահերթությունից ելնելով՝ կոչ ենք անում օր առաջ միջոցներ ձեռնարկել՝ ՀՀ-ի եւ ԱԴՀ-ի միջեւ համապարփակ ռազմաքաղաքական պայմանագրի կնքման համար

**ՀՀԴ Արցախի Կենտրոնական կոմիտե**

### Բանակցային գործընթացում անհրաժեշտ են նոր մոտեցումներ



ԵԱԿԿ Միսկի խմբի համա-նախագահներն այցելել են տարածաշրջան, իսկ մինչ հերթական այցը ամերիկացի համաձայնագրի հանդես էր ելել Եվրոյոթ, որի ժամանակ խոսել էր բանակցային սեղանին դրված 6 կետերի մասին, որոնցից եւ ոչ մեկը արցախյան կողմի համար ընդունելի չէ: Համաձայնագրի հերթափոխները Զաշաթաղում դիմավորեցին բողոքի ցույցով, որի ժամանակ էլ Երիտասարդները ներկայացրին արցախցիների տեսակետը:

**Կարդացեք 2-րդ էջում**

### ՀՀ-ի ցանկացած համագործակցության հիմքում պետք է լինի ՀՀ-ի կողմից ԱԴՀ-ի անվտանգության երաշխավորի ռազմավարությունը. ԱԴՀ փոխվարչապետ



Հայաստանի Հանրապետության քաղաքական Էլիտան բազմիցս հայտարարել է, եւ իրականում այդպէս էլ կա, որ Հայաստանի Հանրապետությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անվտանգության երաշխավորն է՝ իր բոլոր բաղադրիչներով՝ թե՛ տնտեսական, թե՛ Էներգետիկ եւ թե՛ ռազմական. Yerkir.am-ին տված հարցազրույցում հայտնել է ԱԴՀ փոխվարչապետ, պահեստազորի գեներալ-լեյտենանտ Արթուր Աղաբեկյանը՝ անդրադառնալով...

**Կարդացեք 3-րդ էջում**

### Բանակցային գործընթացում անհրաժեշտ են նոր մոտեցումներ

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներն այցելել են տարածաշրջան, իսկ մինչև հերթական այցը ամերիկացի համանախագահը հանդես էր եկել ելույթով, որի ժամանակ խոսել էր բանակցային սեղանին դրված 6 կետերի մասին, որոնցից եւ ոչ մեկը արցախյան արցախցիցիների տեսակետը: Համանախագահներին արցախցի երիտասարդները Քաշաթաղում դիմավորեցին բողոքի ցույցով, որի ժամանակ էլ երիտասարդները ներկայացրին արցախցիցիների տեսակետը: Համանախագահների համար, որքան էլ տարօրինակ լինի, անակնկալ է եղել արցախցիների նման վերաբերմունքը: ՀՀ-ի Արցախի ԿԿ ներկայացուցիչ Դավիթ Իշխանյանի համոզմամբ՝ գարմանալի է այն հանգամանքը, որ համանախագահների համար անակնկալ է եղել, երբ Ղարաբաղում ժողովրդի կողմից տեսել են պահանջատիրության արտահայտում: «Ստացվում է այնպես, որ համանախագահների համար անակնկալ է, երբ իրենց հերթական այցելություններից առաջ Ադրբեյջանի իշխանություններն ամենաբարձր մակարդակով ռազմատենչ հայտարարություններ են անում, որոնք հստակ սպառնալիքներ են հայկական կողմի համար, համանախագահների համար անակնկալ է, երբ նախքան իրենց այցելությունը կամ իրենց այցելության օրերին սահմանված ադրբեյջանական դիպլոմատիայի կողմից հայ գինձառայող է գոհվում, իրենց համար անակնկալ է, երբ Ադրբեյջանը բազմիցս փորձում է խառնաշփոթ առաջացնել բանակցային գործընթացում կամ փորձում է ընթացող բանակցային գործընթացին նոր ձեւաչափ պարտադրել: Այդ ամենը կարծես թե անակնկալ է իրենց համար, բայց մեր կողմից բողոքի փոքր ալիքը համանախագահների համար դառնում է անակնկալ: Համանախագահների վերջին այցից հետո մենք հերթական անգամ համոզվեցինք, որ համանախագահների այցելությունը տարածաշրջան պարզապես հերթական այցելություն է այցելության համար»:

կա նաեւ չերեացող կողմ, որը թերեւս հրապարակային ներկայացված չէ»:

Հետաքրքրականն այն է, որ համանախագահների այցելությունը պետք է ավարտվեր Բաքվում Ադրբեյջանի նախագահի եւ արտգործնախարարի հանդիպումից հետո: Սակայն ծրագրված հանդիպումն այդպես էլ չի կայանում, քանզի այդ երկրի արտաքին քաղաքականության պատասխանատուները, արհամարհելով համանախագահներին, նույն օրը մեկնում են այլ հանրապետություն: Դավիթ Իշխանյանի համոզմամբ՝ տարօրինակ

այսինքն է»:

Մի համանախագահները, Ադրբեյջանում հանդիպելով միայն պաշտպանության նախարարի հետ, տարածեցին իրենց հերթական հայտարարությունը, որտեղ նշված է, որ հանդիպել են Հայաստանի եւ Ադրբեյջանի դեկլարանտի հետ՝ միտումնավոր կերպով հավասարության նշան դնելով երկու կողմերի միջեւ: «Ադրբեյջանի արտաքին քաղաքականության պատասխանատուների կողմից դրսևորած արհամարանքը համանախագահները փորձել են շատ հպանցիկ մատուցել



նակ չէր Ադրբեյջանի արտաքին քաղաքականության պատասխանատուների նման վերաբերմունքը: «Ադրբեյջանի նախագահի եւ արտգործնախարարի պահվածքը մի կողմից տարօրինակ է, մյուս կողմից՝ ոչ: Եթե հիշենք ամերիկացի համանախագահի վերջին ելույթը, որտեղ նա թույլ է տալիս «համաշխարհային խաղաղող Ադրբեյջան» արտահայտությունը, բնականաբար պետք է այցելության ընթացքում անկնկալել «համաշխարհային մակարդակով խաղաղողի» հերթական քայլ, որը եւ ցույց տվեց Ադրբեյջանը: Եվ տվյալ պարագայում Ադրբեյջանը փորձեց ոչ թե մանկամտորեն, այլ մեկ այլ ձեւաչափով մոտենալ հարցին: Տարօրինակ է այն առումով, որ այդպիսի պահվածքը մտահոգությունների տեղիք է տալիս: Ադրբեյջանն իրեն թույլ տալով այդպիսի վարքագիծ՝ ձեւախեղում է ընդհանուր բանակցային գործընթացը, իսկ հայկական կողմը պետք է օգտվի այդ ամենից: Այսինքն, եթե հավասարը հավասարին սկզբունքով բանակցային գործընթացին մոտենում չի ցուցաբերվում, ապա հայաստանյան կողմն այստեղ ունի իր հավելյալ խաղաթուղթ, որն, ըստ իս, Արցախն է, իսկ Արցախն իր տեսակետն արդեն հրապարակավ ներկայացրել է»:

համաշխարհային հանրությանը,- նշեց Դ. Իշխանյանը եւ հավելեց,- մի կողմից հավասարության նշան դնելով Հայաստանի Հանրապետության նախագահի եւ Ադրբեյջանի պաշտպանության նախարարի միջեւ, մյուս կողմից իրենց նկատմամբ ցույց տված արհամարհանքը փորձել են ինչ-որ ձեւով պարփակել»:

Համանախագահներն իրենց հայտարարության մեջ անդրադարձել են նաեւ Սարսանգի ջրամբարի ջրային ռեսուրսների համատեղ օգտագործմանը: Կարելի է եզրակացնել, թե այդ դրույթն ում առաջարկով է մտցվել հայտարարության մեջ, քանզի ամերիկացի համանախագահ Ուորլիքը մինչև հայտարարության հրապարակումը իր թվիթերյան էջում արդեն իսկ անդրադարձել էր այդ հարցին: Դ. Իշխանյանի հավաստմամբ՝ հնարավոր է համատեղ օգտագործել Սարսանգի ջրային ռեսուրսները: «Գաղտնիք չէ, որ Սարսանգի ջրամբարի մասին դեռեւս մեկ տարի առաջ բարձրաձայնել է ՀՀ-ի Արցախի ԿԿ անդամ, ԼՀԳ փոխվարչապետ Արթուր Աղաբեյջանը: Հարցն այսօր չէ, որ հրապարակի վրա է, եւ Սարսանգի ջրամբարի ու, ընդհանրապես, Արցախի ջրային ռեսուրսների համատեղ օգտագործման առաջարկ է նման

պատրաստակամություն հայկական կողմը միշտ էլ ունեցել է: Սակայն այդ ամենի իրագործման համար Ադրբեյջանից համարժեք քայլեր են անկնկալվում: Այդ քայլերը կարող են լինել բազմաբնույթ եւ բազմաթիվ: Օրինակ, մենք կարող ենք Սարսանգի ջրամբարի ջուրը տրամադրել ադրբեյջանական կողմին՝ դրա դիմաց ստանալով Ստեփանակերտի օդանավակայանի օգտագործման անվտանգության երաշխիքներ կամ՝ նավթային կամ գազային ռեսուրսներ: Այսինքն, մենք պետք է համարժեք պատասխան ստանանք ադրբեյջանական կողմից, իսկ եթե ոչ, ապա այդ տնտեսական լծակն ունի իր քաղաքական ազդեցությունը եւ, քաղաքական լծակի վերածվելով, հայկական կողմը բնականաբար պետք է օգտագործի այդ լծակը»:

Արցախի ՀՀ-ի ներկայացուցչի հավաստմամբ՝ Արցախն իր հետագա քայլերը չպետք է պայմանավորի համանախագահների այցերով կամ հայտարարություններով: «Համանախագահների հերթական այցից հետո չէ, որ մենք պետք է մեր տակտիկական քայլերը կամ ռազմավարական խնդիրները վերանայնեցնենք: Մենք ունենք մեր ռազմավարական խնդիրները: Արցախի միջազգային ճանաչումը կարող է տարբերակներից մեկը լինել բանակցային գործընթացում նոր մոտեցումներ որդեգրելու համար: Պետք է շարունակվի Արցախի միջազգային ճանաչման գործընթացը: Եւ երկրորդ՝ Արցախի տնտեսական հզորացումը եւ ժողովրդագրական իրավիճակի ուղղությամբ համապատասխան աշխատանքները, այն, ինչ այսօր որդեգրել է Արցախի Հանրապետությունը եւ իր ռազմավարական ու մարտավարական քայլերով աստիճանաբար փորձում է ազդեցություն թողնել բանակցային գործընթացին: Պատահական չէ, որ համանախագահների կողմից նաեւ շեշտվել է ընդհանուր կացության մեջ փոփոխությունները, ենթակառուցվածքներում բարվոք իրավիճակը, բայց նաեւ հղում է արվել ժողովրդագրական իրավիճակին: Ի վերջո, մենք 5 տարին մեկ ակնատես ենք լինում միջազգային ճգնաժամային խմբի այցելությանն Արցախ եւ համապատասխան ուսումնասիրությունները: Մենք պետք է մեր շեշտադրումը դնենք ոչ թե բանակցային գործընթացին կամ փակուղային իրավիճակներին, այլ արտաքին ճակատի վրա՝ Արցախի միջազգային ճանաչման հեռանկարներին եւ դրանց շարունակականության ապահովմանը: Մյուս կողմից՝ ներքին կյանքում մենք պետք է ունենանք տնտեսական կայունություն, տնտեսական աճ եւ ժողովրդագրական բարվոք իրավիճակ: Այս ամենը կարող են նոր մոտեցումներ թելադրել բանակցային գործընթացին»:

ԱՍԻ ԱՍՏՅԱՆ

## Ստորագրվեց Եվրասիական միության ստեղծման պայմանագիրը. Հայաստանը մասնակցեց, բայց չստորագրեց Ադրբեյջանի նամակներն ու Հայաստանին ուղղված առաջարկները Եվրասիականում

Ղազախստանի մայրաքաղաք Աստանայում ստորագրվեց Եվրասիական միության ստեղծման պայմանագիրը: Այն ստորագրեցին ՌԴ, Բելառուսի եւ Ղազախստանի նախագահները: ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, ով ներկա է եղել Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի նիստին, հայտարարել է, որ Հայաստանը մտադիր է պայմանագրին միանալ մինչև հունիսի 15-ը:

Վլադիմիր Պուտինը, Ալեքսանդր Լուկաշենկոն եւ Նուրսուլթան Նազարբաևը առաջարկել են քննարկել այդ հարցը մինչև հուլիսի 1-ը՝ ընդգծելով, որ Հայաստանը պետք է կատարի իր առջեւ դրված բոլոր պահանջները: Եվրասիական միությունը նպատակ է ունենալու ձեւավորել միասնական շուկա եւ միասնականացնել անդամ-երկրների տնտեսական քաղաքականությունը: Փաստաթուղթն ուժի մեջ կմտնի 2015 հունվարի մեկից:

Ի դեպ, Հայաստանի Հանրապետության նախագահի առաջարկը՝ արագացնելու Հայաստանի Հանրապետության անդամակցությունը նորաստեղծ տնտեսական միությանը, Ղազախստանի նախագահի առաջարկությանը հետաձգվեց մինչև հուլիսի 1-ը: Ըստ Ղազախստանի նախագահի՝ դա հնարավոր

կլինի, եթե հունիս ամսվա ընթացքում բոլոր առեւտրային հարցերը լուծվեն: Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը համաձայնվել է առաջարկին: Իսկ Բելառուսի նախագահ Լուկաշենկոն ընդգծել է, որ Հայաստանը պետք է կատարի միության մասնակցության համար ներկայացվող բոլոր պահանջները:

Ուշագրավ է, որ Հայաստանին այդպես էլ չթույլատրվեց դառնալ Եվրասիական տնտեսական միության հիմնադիր անդամ, ինչը, ըստ քաղաքագետների, որոշակի առավելություններ կտար Հայաստանի Հանրապետությանը: Թե Հայաստանը ինչ կարգավիճակով է միանալու նորաստեղծ միությանը՝ առայժմ հայտնի չէ: Հիշեցնենք, որ Հայաստանի՝ Եվրասիական միությանը եւ Մաքսային միությանն անդամակցելու դեմ որոշակի կոչոտ հայտարարություններով էին հանդես եկել Ղազախստանն ու Բելառուսը:

Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաևն առաջարկել է Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի միանալու վերաբերյալ պայմանագրում մի կետ ավելացնել այն մասին, որ այդ երկիրը դա անում է այն սահմանների շրջանակներում,

որոնք ամրագրված են ՄԱԿ-ում:

«Հայաստանը կարող է միանալ Եվրասիական տնտեսական միությանը այն սահմանների շրջանակներում, որոնցով նա մտել է Առևտրի համաշխարհային կազմակերպություն (ԱՀԿ)», - այդ մասին տեղեկացրել է Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաևը Եվրասիական միության բարձրագույն խորհրդի նիստում:

«Մի հարց, որ կարելի էր լուծել հետագայում: Այն մեզ համար այնքան էլ հաճելի չէ: Բայց կիրառել այն, ինչ Հայաստանը կիրառել է ԱՀԿ մտնելիս՝ ՄԱԿ-ում ամրագրված սահմանների շրջանակներում, որպեսզի չգրգռենք մեր մեկ այլ ընկերոջն Ադրբեյջանում», - ասել է Ղազախստանի նախագահը եւ, դիմելով Հայաստանի Հանրապետության նախագահին, ասել,- «Դուք այդպես եք ընդունվել ԱՀԿ»:

Նազարբաևը պարզաբանել է իր այդ դիրքորոշման շարժառիթները՝ ասելով. «Մենք՝ բոլոր նախագահներս, նման ենք ստացել Ադրբեյջանի նախագահից՝ այն մասին, որ Եվրասիական տնտեսական միությանը միանալու վերաբերյալ պայմանագրի դրույթները պետք է տարածվեն այն միջազգային սահ-

մանների շրջանակներում, որոնք ճանաչված են ՄԱԿ-ի կողմից, ինչպես ԱՀԿ-ի դեպքում: Սա քննարկման համար»:

Հիշեցնենք, որ Հայաստանը ԱՀԿ է մտել 2003 թ.՝ դառնալով այդ կազմակերպության 145-րդ անդամը: Ինչպես արդեն հայտարարել էր Սերժ Սարգսյանը, հունիսի 15-ին Հայաստանը մտադիր էր միանալ Եվրասիական տնտեսական միության կազմավորման պայմանագրին:

«Եկեք հունիսի ընթացքում դա քննարկենք», - առաջարկել է Ղազախստանի նախագահը:

Հետաքրքրական է, որ Ադրբեյջանը որեւէ առնչություն չունի Եվրասիական տնտեսական միության հետ, ավելին՝ երբեք նույնիսկ չի ակնարկել, որ ցանկություն ունի միանալ Եվրասիական տնտեսական միությանը:

Ի դեպ, հայաստանյան տարբեր պաշտոնյաներ բազմիցս հայտարարել են, որ Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի միջեւ մաքսակետ չի կարող տեղադրվել:

Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

### ՀՀ-ի ցանկացած համագործակցության հիմքում պետք է լինի ՀՀ-ի կողմից ԼՂՀ-ի անվտանգության երաշխավորի ռազմավարությունը. ԼՂՀ փոխվարչապետ



Հայաստանի Հանրապետության քաղաքական էլիտան բազմիցս հայտարարել է, եւ իրականում այդպես էլ կա, որ Հայաստանի Հանրապետությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անվտանգության երաշխավորն է՝ իր բոլոր բաղադրիչներով՝ թե՛ տնտեսական, թե՛ էներգետիկ եւ թե՛ ռազմական. Yerkir.am-ին տված հարցազրույցում հայտնել է ԼՂՀ փոխվարչապետ, պահեստազորի գեներալ-լեյտենանտ Արթուր Աղաբեկյանը՝ անդրադառնալով Աստանայում Եվրասիական տնտեսական միության Բարձրագույն խորհրդի նիստի ժամանակ Ղազախստանի նախագահ Նուր-տուլջան Նազարբաեւի՝ Հայաստանի սահմաններին վերաբերող հայտարարությանը:

Ըստ Ա. Աղաբեկյանի՝ Նազարբաեւն իր հայտարարությամբ, իր խոս-

քը կառուցելիս՝ մեջբերելով Ադրբեջանի նախագահի նամակը, կասկածի տակ է դնում Եվրասիական տնտեսական միության ապագան: «Որովհետեւ Եվրասիական տնտեսական միությունը անվտանգության միջավայր է, եւ եթե այդ անվտանգության միջավայրում այդ միջավայրին ոչ մասնակից երկրի միջնորդությունը քաղաքական հայտարարություններ անելու հիմք է այդ անվտանգության միջավայրին մասնակից երկրի ղեկավարի համար, դա նշանակում է, որ այդ ղեկավարը դրանով կասկածի տակ է դնում միջավայրի ապագան»,- նշեց Արթուր Աղաբեկյանը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ նման հայտարարությամբ Նազարբաեւը հասկացնում է, որ Ադրբեջանը, մասնակից չլինելով, բոլոր հիմքերն ունի ազդելու այդ միջավայրի վրա:

Yerkir.am-ի դիտարկմանը՝ երբ արդեն Նազարբաեւի հայտարարությունից պարզ է դառնում, որ Եվրասիական տնտեսական միությանը ոչ մասնակից Ադրբեջանի տե-

սակետն ավելի շատ է հարգվում, քան մասնակից դառնալ փորձող Հայաստանի, ո՞րն է նման միջավայրին անդամակցելու նպատակահարմարությունը, չարժե՞, որ Հայաստանը վերանայումներ անի իր արտաքին քաղաքականությունն իրականացնելիս, ԼՂՀ փոխվարչապետը պատասխանեց, որ Հայաստանի Հանրապետությունը, անկախ նրանից, թե որ անվտանգության միջավայրում է գործունեություն իրականացնում, պետք է միշտ հաշվի առնի այն հանգամանքը, որ ՀՀ-ն եղել է մնալու է ԼՂՀ-ի անվտանգության երաշխավորը: «Այսինքն՝ ցանկացած համագործակցություն այլ երկրի հետ կառուցելիս, բարեկամ, թե թշնամի երկրի հետ երկխոսելիս՝ հիմքում պետք է ունենա թիվ մեկ ռազմավարությունը՝ ՀՀ-ն ԼՂՀ-ի երաշխավորն է»,- եզրափակեց Արթուր Աղաբեկյանը:

«ԱՊՊՈՍՏ»

### Ռուսաստանը ռազմական տեխնիկայի նոր խմբաքանակ կմատակարարի Ադրբեջանին

Ադրբեջանական լրատվամիջոցների փոխանցմամբ՝ մոտ օրերս Ռուսաստանը պատրաստվում է Ադրբեջան ուղարկել TOS-1 տեսակի 6 հրթիռային համակարգերի հերթական խմբաքանակը: Այդ մասին ադրբեջանական APA լրատվական գործակալությանը հայտնել է ռուսական «Օժձ-ձձձիճձձի» կոնցեռնի ներկայացուցիչը:

Ադրբեջանի եւ Ռուսաստանի միջեւ կնքված գործարքի համաձայն՝ Ռուսաստանն Ադրբեջանին կտրամադրի 18 հատ TOS-1 տեսակի հրթիռային համակարգ:

Ադրբեջանական haqqin.az կայքը նշում է, որ TOS - 1A համակարգեր այսօր միայն Ռուսաստանի, Ղազախստանի եւ Ադրբեջանի զինված ուժերում կան:

Իսկ Ղազախստանի մայրաքաղաք Աստանայում ընթացող KADEX-2014 սպառազինությունների երրորդ միջազգային ցուցահանդեսի ընթացքում Ռուսաստանի Ղաշ-

տության ռազմատեխնիկական համագործակցության դաշնային ծառայության տնօրենի տեղակալ Կոնստանտին Բիրյուկինը ռուսական ITAR-TASS գործակալության հետ զրույցում ասել է, որ Ռուսաստանն ավարտել է Ադրբեջանին T-90C 100 տանկերի խմբաքանակի մատակարարումը՝ հավելելով, որ կա Բաքվին գրեթե նույն քանակությամբ T-90C-ի մատակարարման պայմանագրի հնարավորություն: «Մակայն երկրորդ խմբաքանակի վերաբերյալ պայմանագիրն առայժմ կնքված չէ»,- ասել է Բիրյուկինը:

Ադրբեջանին մեկ այլ տեսակի ժամանակակից ռազմական տեխնիկա տրամադրելու համար նոր գործարք է պատրաստվում՝ այս մասին տեղեկացնում է ռուսական «Էմիձձձիձձ» պարբերականը: Պարբերականը փոխանցում է, որ Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը հետաքրքրված

է «Áàè-Ý» հրթիռային համալիրներ ձեռք բերելու համար: Պարբերականը նշում է նաեւ, որ Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը հայտ է ուղարկել Ռուսաստանի Ղաշնույան ռազմատեխնիկական համագործակցության Ղաշնային ծառայություն՝ մեկ հատ «Áàè-Ý» հրթիռային համալիր ձեռք բերելու համար, որը մտադիր է օգտագործել Կասպից ծովի առափնյա պաշտպանության համար: «Էմիձձձիձձ»-ի փոխանցմամբ՝ Ադրբեջանին համալիրներ մատակարարելու վերաբերյալ նախնական բանակցություններն արդեն կայացել են, եւ ռազմատեխնիկական համագործակցության նախագահական հանձնաժողովն արդեն որոշել է թույլ տալ Ադրբեջանին՝ ձեռք բերել «Áàè-Ý»:

«Էմիձձձիձձ»-ը նշում է, որ Ռուսական իշխանությունները Հայաստանի կողմից բացասական արձագանք չեն սպասում:

«Áàè-Ý»-ն պաշտպանում է Կասպից ծովի ծովային տարածքը, իսկ Հայաստանը Կասպից ծով ելք չունի: Պայմանագիրը կնքելուց հետո Ադրբեջանը կդառնա 3-րդ երկիրը, որ ունի նման համալիրներ՝ ՌԴ-ից եւ Վիետնամից հետո:

Սակայն ռուսական պարբերականը չի նշում, որ ռուսական կողմը որեւէ կերպ հաշվի չի առնում իր դաշնակցի շահերը՝ Հայաստանի պաշտպանության հակառակորդին մեծ քանակությամբ զինտեխնիկա վաճառելիս, իսկ Հայաստանի իշխանությունները որեւէ կերպ չեն արձագանքում դրան, եւ հայկական իշխանությունների լռության ներքո Ռուսաստանը շարունակում է ավելի ու ավելի շատ ժամանակակից զինտեխնիկա մատակարարել մեր թշնամուն՝ Ադրբեջանին:

Վ. Գ.

### Նազարբաեւի հիմնավորումներն անհիմն են



րագրված սահմանների շրջանակներում, որպեսզի չգրգռենք մեր մեկ այլ ընկերոջն Ադրբեջանում»,- ասել է նա:

Կիրո Մանոյանը կարծիք հայտնեց, որ, հավանաբար, նաեւ նախորդ անգամ Սերժ Սարգսյանի չմասնակցելը ՄՄ անդամ երկրների նախագահների վերջին ժողովին, երբ ակնկալվում էր նրա մասնակցությունը, կապված էր հենց այդ հարցի հետ: «Բայց, նախ՝ ՄԱԿ-ին Հայաստանի անդամակցության ժամանակ նման սահմանների հարց չի եղել, ՄԱԿ-ում Հայաստանի սահման չի ամրագրվել, ինչպես որ ՄԱԿ-ի անդամ պետությունների մեծ մասի սահմանները ՄԱԿ-ում չեն ամրագրվել: Կան մի շարք երկրներ, որոնց սահմաններն ամրագրվել են հենց ՄԱԿ-ի կողմից, բայց Հայաստանի պարագայում այդպես չէ: Երկրորդ՝ Առեւտրի համաշխարհային կազմակերպությանը Հայաստանի անդամակցությունը թույլ չի տալիս ԱՀԿ-ին՝ Հայաստանին ասել՝ Ղարաբաղի հետ սահմանի վրա մաքսակետ դիր»,- նշեց Մանոյանը՝ հավելելով, որ Նազարբաեւը, փաստորեն, փորձում է հիմնավորումներ բերել, որոնք իրականում չկան: Մեր զրուցակիցը հույս հայտնեց, որ ՀՀ նախագահն էլ, ըստ այդմ, կպատասխանի այդ հայտարարությանը:

Ըստ նրա՝ պարզ է, որ սա ԼՂՀ-ն Հայաստանից մեկուսացնելու փորձ է, դա է հիմնական նպատակը, եւ Նազարբաեւը չի թաքցնում, որ չի ուզում Ադրբեջանի նախագահին նեղացնել: Բայց նրա հիմնավորումները, ըստ Մանոյանի, անհիմն են:

«ԱՊՊՈՍՏ»

Մտահոգիչ է՝ Ղազախստանը հնչեցրել է տեսակետ, եւ հենց դա է ուզում ասել Նազարբաեւը, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ու Հայաստանի Հանրապետության միջեւ ինչ-որ սահմանակետ դրվի:

Yerkir.am-ին այսօր ասաց ՀՀ-ի Բյուրոյի Հայ Ղաթի եւ քաղաքական հարցերի գրասենյակի պատասխանատու Կիրո Մանոյանը՝ անդրադառնալով Աստանայում Եվրասիական տնտեսական միության Բարձրագույն խորհրդի նիստում Ղազախստանի նախագահ Նուրտուլջան Նազարբաեւի հնչեցրած հայտարարությանը:


Հիշեցնենք, որ Նազարբաեւն առաջարկել էր Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի միանալու վերաբերյալ պայմանագրում մի կետ ավելացնել այն մասին, որ Հայաստանը դա անում է այն սահմանների շրջանակներում, որոնք ամրագրված են ՄԱԿ-ում: «Հարց, որը կարելի էր լուծել հետագայում: Այն մեզ համար այնքան էլ հաճելի չէ: Բայց կիրառել այն, ինչ դուք (Հայաստանը) կիրառել եք ԱՀԿ մտնելիս, ՄԱԿ-ում ամ-

### Լեզգիները դիմել են Ռուսաստանին՝ սեփական պետություն ստեղծելու համար

Համացանցում տեղեկություն է տարածվել, որ «Լեզգիստանի կառավարության» պատվիրակությունը հանրագիր է ուղարկել Կրեմլ՝ Հարավային Դաղստանի ու Գյուսիսային Ադրբեջանի տարածքում Լեզգիստանի Հանրապետություն ստեղծելու պահանջով՝ մասնավորապես այս մասին նշված է Lezgistan ֆեյսբուքյան խմբում:

Այժմ լեզգիները բնակվում են Դաղստանի հարավային շրջաններում եւ Ադրբեջանի հյուսիս-արեւելյան տարածքներում՝ ՌԴ հետ սահմանակից շրջաններում, ու ցանկանում են Դաղստանի հարավային եւ Ադրբեջանի հյուսիսային շրջանների իրենց պատմական հայրենի տարածքներում Լեզգիստանի Հանրապետություն ստեղծել: Լեզգիների մոտավոր թիվը կազմում է մեկ միլիոն մարդ, որից 473 000 բնակվում են Ռուսաստանի Դաղստանի տարածքում՝ հիմնականում Դաղստանում, իսկ 220 000 բնակվում է Ադրբեջանի տարածքում:

Հիշեցնենք, որ 6-13-րդ դարերում գոյություն է ունեցել Լեզգիստան միջ-



նադարյան լեզգիական պետություն: Ի դեպ, լեզգիների եւ ադրբեջանցիների միջեւ նաեւ կրոնական տարբերություն կա՝ լեզգիների մեծ մասը սունի մահմեդականներ են, իսկ ադրբեջանցիները՝ շիա մահմեդականներ են:

Ուշագրավ է նաեւ այն փաստը, որ լեզգիները նման քայլի են դիմել Դրիմում կատարվածից հետո, երբ հանրաքվեի միջոցով Ուկրաինայից անջատվեց եւ Ռուսաստանին միացավ Դրիմի ինքնավար հանրապետությունը եւ Սեւաստոպոլ քաղաքը: Ռուսաստանին միանալու հանրագրով ՌԴ նախագահին է դիմել նաեւ Մերձդնեստրի կառավարությունը:

Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության հանդիպումը Վաղուհաս համայնքում

Սույն թվականի մայիսի 24-ին «Դաշնակցություն» խմբակցությունը հանդիպում ունեցավ Մարտակերտի շրջանի Վաղուհաս համայնքում: Հանդիպումը տեղի ունեցավ գյուղի մշակույթի տանը, ժամը 18:00-ին:

Մինչև հանդիպումը սկսելը բնակիչները միացան պատգամավորներին և միասին այցելեցին Արցախյան շարժման ժամանակ գոհված ազատամարտիկների գերեզմանատուն և ծաղիկներ դրեցին հուշաքարին:

Գյուղապետ Սամվել Հայրապետյանը ներկայացրեց հանդիպման նպատակը:

Պատգամավոր Կամո Բարսեղյանը ներկայացրեց ԼՂՀ Ազգային ժողովի և «Դաշնակցություն» խմբակցության կատարած աշխատանքները:

Իր խոսքում նա նշեց, որ պատգամավորը ընտրվելուց հետո պարտավոր է այցելել տարբեր համայնքներ, ներկայացնել հասարակությանը ԼՂՀ ԱԺ-ի կատարած աշխատանքները և, միաժամանակ, բնակչության հուզող հարցերին ավելի մոտիկից ծանոթանալ՝ այստեղ նշելով միաժամանակ, որ Արցախի հանրային հեռուստատեսությունը ոչ լիարժեք է լուսաբանում ԱԺ-ի կատարած աշխատանքները: Նա նշեց, որ Վաղուհաս համայնքում «Դաշնակցություն» խմբակցության երկրորդ հանդիպումն է դա:

Պատգամավոր Արմեն Սարգսյանը իր ելույթում շեշտեց, որ Դաշնակցությունը, լինելով քաղաքական ուժ, փորձում է երկրի առջև ծառայող հարցերը լուծել մյուս քաղաքական ուժերի հետ համատեղ, որպեսզի դրսից հետևողը այստեղ տեսնի միասնություն և չօգտվի մեր անփաբանությունից: Նա ներկայացրեց

նաև դեմ քվեարկած օրենքների պատճառները:

Ներկայացրեց նաև, որ Դաշնակցությունը դեմ է այսօրվա շրջանների ղեկավարման մեխանիզմին՝ բացատրելով, որ շրջվարչակազմի ղեկավարը ես պետք է ընտրվի լինի, իսկ կառավարությունը կարող է միաժամանակ գուցահեռ իր ներկայացուցչին նշանակել:

Վահրամ Բալայանը իր զեկույցում հիմնականում անդրադարձավ Արցախի

գորգագործարաններ բացելու մասին և՛ որ մոտ ապագայում Արցախի մոտ 3000 կին կապահովվեն աշխատանքով:

Միաժամանակ ներկայացվեց Արաքսավանում կատարվող աշխատանքները որն ունի ոչ միայն տնտեսական, այլև ռազմավարական նշանակություն:

Վերջում Վահրամ Բալայանը շեշտեց, որ մեր երկիրը զարգացնելու ճիշտ ձեռք տնտեսությունը ճիշտ կառուցելու մեջ է: Իսկ այդ գործում՝ նա նշեց, որ ժողովուրդը պետք է ակտիվ լինի:

Հանդիպման վերջում գյուղապետը ներկայացրեց բնակիչներին հուզող հարցերը, որոնք հիմնականում վերաբերվում էին տանիքների վերանորոգմանը և գյուղին խմելու ջրով ապահովմանը՝ նշելով, որ 70 ընտանիքի ջուր չի հասնում: Ասացին նաև, որ նախկին դպրոցի շենքում ցանկալի կլիներ մանկապարտեզ բացել:


Մի շարք հարցերի խմբակցության անդամները տեղում տվեցին պատասխաններ, մնացած հարցերը խոստացան քննարկել համապատասխան մարմիններում:

Վերջում ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցությունը մշակույթի տանը նվիրաբերեց սպորտային պարագաններ:

Հանդիպմանը մասնակցում էր նաև Մարտակերտի շրջանի «Գանձասար» կոմիտեի ներկայացուցիչ Սամվել Գրիգորյանը:

ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցություն

# Լուիզիանայի սենատը դատապարտել է հայերի կոտորածներն Ադրբեջանում



Մայիսի 29-ին Լուիզիանայի սենատը բանաձեռ է ընդունել, որով դատապարտել է հայերի կոտորածներն Ադրբեջանում, ինչպես նաև կոչ է արել ԱՄՆ կառավարությանը՝ ազդել Բաքվի վրա՝ մեղավորներին պատասխանատվության ենթարկելու հարցում՝ այդ մասին հաղորդում է Ամերիկայի Հայ Դատի գրասենյակի արևելյան թեղ:

Նոր բանաձեռով սենատորներն իրենց ցավակցությունն ու աջակցությունն են հայտնել Ադրբեջանում հայ ժողովրդի դեմ գազանությունների և զանգվածային սպանությունների գոհերի հարազատներին: Օրենսդիրները ԱՄՆ նախագահին և Կոնգրեսին կոչ են արել ազդել Ադրբեջանի կառավարության վրա՝ դադարեցնելու պատմական փաստերի նենգափոխումն ու պատժելու մեղավորներին:

Լուիզիանայի Սենատում բանաձեռը ներկայացվել է սենատոր Էդվին Մյուրեյի կողմից, ով անցած տարի նախաձեռնել էր Սենատի կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության ճանաչումը և կոչ էր արել ԱՄՆ կառավարությանը՝ աջակցել զարգացող ժողովրդավարական երկրի ինքնորոշմանն ու անկախությանը:

ԱՄՆ Լուիզիանա նահանգը ճանաչել է նաև Արցախի Հանրապետության անկախությունը:

«ԱՊՍՍԾ»

# ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության հանդիպումը Հաթերք համայնքում

Հավատարիմ մնալով իր նախընտրական ծրագրին՝ ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցությունը սույն թվականի մայիսի 24-ին հանդիպում կազմակերպեց Մարտակերտի շրջանի Հաթերք համայնքում:

Հանդիպմանը ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցությունից մասնակցում էին պատգամավորներ Արմեն Սարգսյանը, Վահրամ Բալայանը և Կամո Բարսեղյանը:

Հանդիպմանը մասնակցում էր նաև Մարտակերտի շրջանի «Գանձասար» կոմիտեի ներկայացուցիչ Սամվել Գրիգորյանը:

Նախքան հանդիպումը Հաթերք համայնքի բնակիչների հետ, պատգամավորներն այցելեցին Հաթերքի «Բարմեն Գրիգորյանի» անվան միջնակարգ դպրոցը, որտեղ խմբակցությունը դպրոցին նվիրեց սպորտային պարագաներ:

Հանդիպումը տեղի ունեցավ ժամը 13:00-ին, գյուղի մշակույթի պալատում: Գյուղապետ Ռադիկ Ռազմիկի Գրիգորյանը բնակիչներին ներկայացրեց պատգամավորներին և այցելության նպատակը:

Այնուհետև խմբակցության ղեկավար Արմեն Սարգսյանը հանդիպման մասնակիցներին ներկայացրեց ԼՂՀ Ազգային ժողովում «Դաշնակցություն» խմբակցության կատարած աշխատանքները:

Գյուղատնտեսության զարգացման բնագավառում Հայ Հեղափոխական Դաշնակցության և ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության կատարած աշխատանքների մասին մանրամասն ներկայացրեց պատգամավոր Կամո Բարսեղյանը, իսկ արտա-

քին քաղաքականության բնագավառում՝ հատկապես ԼՂՀ ճանաչման գործընթացին վերաբերող աշխատանքները ներկայացրեց Վահրամ Բալայանը:

Օրենսդրական դաշտում կատարած աշխատանքների մասին խմբակցության ղեկավար Արմեն Սարգսյանը նաև ներկայացրեց կողմ և դեմ քվեարկած օրենքները՝ հիմնավորելով ու բացատրելով բնակիչներին դեմ քվեարկման պատճառները: «ԼՂՀ դատական օրենսգրքը ուժի մեջ մտնելու մասին» ԼՂՀ օրենքում փոփոխության կատարելու մասին նախագծին, «ԼՂՀ ջրի ազգային ծրագրի մասին» ԼՂՀ օրենքի նախագծին, «Եկամտային հարկի մասին», «Մեղավորության մասին» ԼՂՀ օրենքի նախագծի մասին, «Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին, «Պետական գույքի մասնավորեցման 2010-12թթ. ծրագրի կատարման 2012թ. տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին», «Ապալի մասին», «ԼՂՀ ընտանեկան օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ԼՂՀ օրենքում լրացումներ կատարելու մասին:

Միաժամանակ, խմբակցության ղեկավարը նշեց, որ ՀՀ Դաշնակցությունը լինելով սոցիալիստական կուսակցություն, բնական է, որ ծրագրային մի շարք դրույթներ տարբերվում են կառավարության ծրագրերից: Իր խոսքում նա ավելացրեց նաև, որ խմբակցությունը պարբերաբար հանդիպումներ է կազմակերպում երկրի նախագահի, վարչապետի, նախարարների և այլ պաշտոնյաների հետ՝ փորձելով ներկայաց-

նել Դաշնակցության պատկերացումները երկրի բոլոր ոլորտների զարգացման հետ՝ դրանց մեջ առանձնացնելով տնտեսական բնագավառում արմատական ռեֆորմների ծրագիրը, պաշտպանության բանակին վերաբերող ծրագիրը և այլն:

Պատգամավոր Կամո Բարսեղյանը բնակիչներին ներկայացրեց հիմնականում գյուղատնտեսության մեջ Դաշնակցության կողմից առաջադրված ապակետրոնացման քաղաքականությանն ու գյուղատնտեսական վարկերի տրամադրմանը միտված աշխատանքները:

Միաժամանակ նա բնակիչներին ներկայացրեց խմբակցության կողմից Ազգային ժողովում բարձրացված գազալցակայաններում գազի գնի իջեցման հետ կապված աշխատանքները և, որ հնարավոր է, կառավարության հետ քննարկելուց հետո մոտ ապագայում այն գազի չափով իջնելու մասին:

Վահրամ Բալայանը ներկայացրեց արտաքին դաշտում խմբակցության և Հայ Հեղափոխական Դաշնակցության կատարած և կատարվող աշխատանքների մասին: Նա ներկայացրեց վերջին շրջանում տեղի ունեցած զարգացումների մասին, ինչպես նաև ՀՀ «Ապառաժ»-ի շրջանի նախաձեռնությամբ վերջերս կազմակերպված համահայկական խորհրդաժողովի մասին, որտեղ մասնակից երկրները Արցախի զարգացման ուղղված խոստումնալից ծրագրեր տվեցին:

Այնուհետև պատգամավոր Արմեն Սարգսյանը բնակիչներին կոչ արեց ավելի ակ-

տիվորեն ընդգրկվել երկրի շենացման գործընթացին և, որ անընդունելի է, տեսնել պատերազմում հաղթած հայ տղամարդուն այսօր որոշակի խնդիրների պատճառներով հեղինակագրված կամ էլ ընկճված, և ուրիշ երկրներում փրկությունը տեսնող:

Հանդիպման վերջում բնակիչները բարձրացրին մի շարք հարցեր, որոնք հիմնականում վերաբերվում էին գյուղի էլեկտրաէներգիայի մատակարարմանը, շուկայի բացակայությանը՝ երբ իշխանությունները ժամանակին խոստացել էին գնել ցանկացած բերք: Բարձրացրին նաև բանկոմատի հետ կապված խնդիրը, որ գյուղացին պետք է իր աշխատավարձի կեսը ծախսի, որպեսզի հասնի շրջկենտրոն և բանկոմատից աշխատավարձը ստանա: Չինձառայողները բարձրացրին իրենց աշխատավարձերի վերջին վեց ամիսների ընթացքում բավական գումարների պահման մասին:

ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցությունը կարողացավ բարձրացված հարցերի մի մասին պատասխանել, իսկ մնացած հարցերը խոստացավ բարձրացնել համապատասխան մարմիններում:

Հանդիպման վերջում խմբակցության անդամները և գյուղի կուսակցական խումբը այցելեցին և ծաղիկներ դրեցին Արցախյան շարժման ժամանակ գոհված ազատամարտիկների հուշարձանին:

ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցություն

# Հայ ժողովրդի համար Մայիսի 28-ը նոր կյանքի սկիզբ է համարվում,- ՀՀԴ Արցախի ԿԿ անդամ Լեւոն Հայրյան



այլ հանրապետության, որը դժվարությամբ կկարողանա իր անվանել հայկական: Մեր հանրապետության իսկական անկախության օրը 1918 թվականի Մայիսի 28-ն է: Տոնացույցում Մայիսի 28-ը նշված է որպես Առաջին Հանրապետության օր, իսկ որպես անկախության օր՝ նշված է 1992թ. սեպտեմբերի 21-ը:

Հայաստանի Առաջին Հանրապետությունը ծնունդ է առել 1918 թվականի մայիսի 28-ին՝ Մայիսյան հերոսամարտերից՝ Սարդարապատից, Բաշ-Ապարանից և Ղարաբաղից հետո: Առաջին հանրապետությունը հիմնադրվեց հայ ժողովրդի համար ծանր ժամանակահատվածում և գոյատևեց մինչև 1920 թվականի դեկտեմբերի 2-ը, երբ Հայաստանը խորհրդայնացավ: Չնայած կարճ կյանքին Առաջին Հանրապետության դերը անգնահատելի է պետականությունը վերագտնելու գործում:

կանը չգիտի, առավել ես՝ որ այսօր Հայաստանի Հանրապետությունը մի մարդու բերանով հայտարարում է, որ մտնում է Մաքսային միություն, որը բերում է Հայաստանի իրական անկախության կորստին: Իսկ այս ամենը գալիս է նրանից, որ մենք իրական անկախության գնահատականը չենք տվել, իրական անկախության ստեղծողներին մինչև այսօր չենք գնահատում: Ուզում եմ մի փոքր պատմական եզակուրս կատարել:

Մեր նորոյա ազատագրական պայքարի սկիզբը կարելի է համարել 19-րդ դարի 40-50-ական թվականները, երբ ունեցանք մի շարք մտավորականներ, որոնք հանդիսացան ազգային ազատագրական պայքարի հիմնադիրները: Խոսքս Ռաֆայել Պատկանյանի, Միքայել Նալբանդյանի հետագայում Ռաֆֆու և այս կարգի մտավորականների մասին է, որոնք սկսեցին ժողովրդի մեջ արթնացնել ազատ հայրենիքի գաղափարը և այդ ուղղությամբ էլ որոշակի քայլեր ձեռնարկել: 20-րդ դարի սկզբին այդ գաղափարը տվեց իր պտուղները: Անկախության համար պայքարի ավելի մարմնացավ, երբ ստեղծվեցին ազգային կուսակցությունները: Առավել ես՝ այն իր կերպարով էլ ավելի խտացավ, երբ ստեղծվեց Հայ Հեղափոխական Դաշնակցությունը: Այսօր, ցավոք սրտի, շատ քչերն են Դաշնակցության պատմական դերը հասկանում, ընդ որում՝ այդ հասկացողների մի մասն էլ, չգիտես ինչ տրամաբանությամբ, թշնամական դիրքերից ենթելով քննադատում են Դաշնակցության դերը: Դաշնակցությունը զրոյից ստեղծեց պետություն: Եթե 1890 թվականին

Դաշնակցությունը չստեղծվեր, ապա 1918 թվականին Հայաստանի Հանրապետություն չէր ստեղծվի: Դաշնակցությունը՝ կուսակցության մեծով և փոքրով լծվեց ազատ, անկախ Հայաստանի կերտման գաղափարին, և չնայած չի կարելի թերագնահատել որևէ մեկի դերն այդ պայքարում, բայց ես այնպես, Դաշնակցության մեջ է ժողովրդի մեջ կան մարդիկ, որոնք դերն առանձնահատուկ է: Հատկապես ուզում եմ խոսել Արամ Մանուկյանի մասին. առանց նրա գործունեության հնարավոր չէ պատկերացնել Հայաստանի անկախ հանրապետությունը: Արամ Մանուկյանը Հայաստանի անկախ հանրապետության ստեղծման ծրագրերի նախագծողներից է և այդ ծրագրերի առաջին իրագործողը: Եթե Արամ Մանուկյանի երկաթե կամքը և հանճարը չլիներ, երեւի հնարավոր չէր լինի պատկերացնել Մայիսի 28-ը և Հայաստանի անկախությունը:

### Հայ ժողովուրդն ինչպե՞ս է գնահատում Արամ Մանուկյանի և մնացած դաշնակցականների գործը:

Թե ինչպես է ժողովուրդը գնահատում Արամ Մանուկյանի և մնացած դաշնակցականների գործը, մենք դա շատ լավ տեսնում ենք, օրինակ թեկուզ այս օրերին մամուլում տեղ գտած բանակազոր՝ բոլշևիկ Միկոյանի արձանը Երեւանում տեղադրելու մասին: Արամ Մանուկյանն այնքան ներդրում, այնքան ծառայություն ունի, որ Հայաստանի բոլոր քաղաքների և գյուղերի կենտրոնական վայրերում պետք է կանգնեցրած լինեին Արամի արձանը: Եթե մեր իրական հերոսների արձանները տեղադրված լինեին Երեւանի կենտրոնում, միկոյանների նմանների արձանների համար տեղ չէր մնար: Մինչդեռ այսօր Հայաստանի Հանրապետությունում չկա Արամ Մանուկյանի արձանը: Եթե չեմ սխալվում՝ Արամի կիսանդրին տեղադրել են Ներքին գործերի նախարարության շենքի բակում՝ նրան համարելով ներքին գործերի առաջին նախարար: Ի պաշտոնե, ի հարկե, դա այդպես է եղել, սակայն մենք բոլորս էլ շատ լավ գիտենք, որ նա ավելին է եղել. նա Հայաստանի անկախության հիմնադիրն էր և ոչ թե ներքին գործերի նախարար:

Մայիսի 28-ի խորհուրդը մեծ է նրանց համար, ովքեր ծառայում են իրենց ազգին և պաշտում են անկախությունն ու ազատությունը: Մայիսի 28-ը չի կարող խորհուրդ ունենալ այն մարդկանց համար, ովքեր որոշել են ծառայել ռուսական կայսրությանը:

Ես այն համոզված եմ, որ այն ազգերը,

որոնք իրենց ճակատագիրը կապել են ռուսների հետ, հավիտյան դժբախտ են լինելու:

### Նշեցի՞ք, որ ձեզ համար երկու տոն գոյություն ունի: Հավանաբար, Նոր տարին և Քրիստոսի ծնունդը նշում եք՝ ինչպես բոլոր հայերս ենք նշում: Հետաքրքրական է՝ Մայիսի 28-ն ինչպես եք նշում:

Մայիսի 28-ը նշում եմ մեծ ոգեշնչումով, մեծ ուրախությամբ և աշխատում եմ իմ ոգեշնչումն ու ուրախությունը փոխանցել իմ շրջապատին: Վերջին մի քանի տարիներին Մայիսի 28-ն անցկացնում եմ Երեւանում Արամ Մանուկյանի ապրած տան մոտ պատվով պահակ կանգնելով իմ սակավաթիվ ընկերների հետ միասին: Մեզ միացողները շատ քիչ են, սակայն մենք ամբողջ օրը կանգնում ենք Արամի տան մոտ՝ ինչպես վայել է: Մենք Արամի տան մոտ այդ հերթապահությունն անում ենք ոչ թե ինչ-որ բան ցույց տալու համար, այլև դա անում ենք մեծ մարդու գործի հանդեպ պարտքի զգացումից ելնելով: Իմ ընկերական շրջապատում քննարկվել է այսպիսի մի հարց, թե ինչու Արամի շիրմին չենք այցելում այդ օրը: Պատասխանը հետեւյալն է՝ մենք սիրում ենք լինել այնտեղ, որտեղ նա ապրել է: Արամի գործը կյանքի գործ է ամբողջ երկրի համար, հայության համար, և գտնում եմ, որ իր գործը էլ ինքը՝ Արամը պետք է ընդունվի իր կենդանի կերպարով և իր կենդանությունը պարզեղ գործով: Նաեւ ասեմ, որ ես Արամին իր բազմաթիվ զինակիցներից ոչ մեկից չեմ տարբերում, պարզապես ինձ համար Արամը նրանց բոլորի ընդհանրացումն է:

Այսօր Արամի տունը գտնվում է անմխիթար վիճակում: Առաջին տարին, որ գնացի պատվով պահակ կանգնելու, Արամի տան տարածքն ամբողջությամբ արքի մեջ կորած էր: Դուռը, որտեղով Արամն է մտել, աղբակույտի էր վերածվել: Սեփական ուժերով փորձեցինք մաքրել՝ որքան հնարավոր է, հետո մարդ կանչեցինք՝ մնացած գործն իրենց ավարտելու հասցրեց: Արամի տան վիճակից երեւում է, թե ինչպես են վերաբերվում մեր անկախությանը հայ ազգի այսօրվա «առաջնորդները»: Սա առաջին հերթին գնահատական է հենց իրենց՝ իշխանավորներին, քանզի՝ եթե իշխանավորը չի հպարտանում իր երկրի պատմությանը կամ ստահոգված չէ իր երկրի գարգացմանը, նշանակում է նա ստրուկ է:

Պատրաստեց Անի ԱՄՍՅԱՆԸ

## Հայաստանի Առաջին Հանրապետություն

Ապառաժը ձեր ուշադրությանն է ներկայացնում Հայաստանի Առաջին Հանրապետության հետ կապված որոշակի կարեւոր հանգամանքներ: Այս անգամ որեւէ զուգահեռներ չենք անցկացնի առաջին հանրապետության և երրորդ հանրապետության միջեւ՝ դա թողնելով ձեր դատողությանը:

### Սոցիալ-տնտեսական

Հայաստանի Առաջին Հանրապետությունն իր գործունեությունը սկսեց սոցիալ-տնտեսական անբարենպաստ պայմաններում: Պատերազմների արդյունքում երկրում ավերվել էին բոլոր ենթակառուցվածքներն ու գործարանները, Մեծ եղեռնից փրկված բազմաթիվ գաղթականներն ու որբեր կային երկրում, վառելիքի պակասի պատճառով գրեթե դադարած էր երկաթուղու գործունեությունը ու երկիրը հայտնվել էր շրջափակման մեջ: Գործարանների չգործելու ու շրջափակման արդյունքում ապրանքների ներմուծման անհնարիության պատճառով երկրում առաջացել էր առաջին անհրաժեշտության ապրանքների պակաս և սով, 1918թ. թուրքական արշավանքների ժամանակ թալանվել էր երկրի մեծ մասը: Նման պայմաններում երկրի ղեկավարում ստանձնելը հիրավի, հերոսություն էր:

Անկախության հռչակման առաջին իսկ օրից երկրի Դաշնակցական կառավարությունը ձեռնամուխ եղավ Հայաստանի Հանրապետության և նրա առջեւ ծառայած ներքին և արտաքին բազմաթիվ խնդիրների լուծմանը:

Սոցիալ-տնտեսական ոլորտում իրականացվեցին մի շարք կարեւոր քայլեր և բարեփոխումներ:

1918թ. օգոստոսին ստեղծվեց հատուկ հանձնախումբ երկրում սովի արդյունքում

առաջացած համաճարակները հաղթահարելու համար, և 1919թ. մարտին բժավոր տիֆի և խոլերայի համաճարակներն արդեն հաղթահարված էին:

Երկրում սկսված սովը հաղթահարելու համար 1919թ. հունվարին Հայաստանի կառավարությունը որոշեց դիմել Դաշնակից երկրներին օգնության համար: Այդ նպատակով վարչապետ Զաքարյանին գործուղվեց Եվրոպա և ԱՄՆ, դիվանագիտական մեծ աշխատանքների շնորհիվ արդեն 1919թ. մայիսին Հայաստան հասավ ԱՄՆ-ից ուղարկված օգնության առաջին խմբակնակը՝ այլուր, ցորեն, խտացրած կաթ, բրինձ և այլն, որի ծավալները հետագայում աճեցին և հնարավոր եղավ հիմնականում հաղթահարել սովը:

Բավականին բարեփոխումներ իրականացվեցին գյուղատնտեսության ոլորտում: 1919թ. օգոստոսին՝ հողային ռեֆորմի արդյունքում, բոլոր կալվածատիրական և եկեղեցապատկան հողերն ազգայնացվեցին և բաշխվեցին այն սակավահող գյուղացիների, որի իրականացման համար «հողային հատուկ մարմինների մասին օրինագիծ ընդունվեց»:

1920թ. ստեղծվեց նաեւ ազգային դրամը: Երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման ուղղված՝ առաջին համապետության իշխանությունները, թեկուզ պետականության կարճատեւ ժամանակաշրջանում մի շարք այլ կարեւոր քայլեր իրականացրեցին:

### Ժողովրդավարական սկզբունքներ

Առաջին հանրապետության հռչակումից հետո երկրի իշխանությունները որդեգրեցին ժողովրդավարական արժեքներ և այն դրեցին երկրի զարգացման հիմքում՝ Հայաստան-

նի Հանրապետությունը հռչակելով որպես Հայոց պետություն՝ այնտեղ ապրող բոլոր ժողովրդների համար:

Չնայած երկրում առկա ներքին և արտաքին բազմաթիվ խնդիրների՝ 1919թ. երկրում անցկացվեց խորհրդարանական ընտրություններ: Խորհրդարան անցան ոչ միայն իշխող Դաշնակցություն կուսակցության ներկայացուցիչները, այլև մյուս կուսակցությունների ներկայացուցիչներ այդ թվում նաեւ՝ բոլշևիկներ: Խորհրդարանում տեղ ունեցան նաեւ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ այդ թվում նաեւ՝ թուրք-թաթարական համայնքից:

Հայաստանի առաջին խորհրդարանում ընտրվեցին նաեւ 3 կին պատգամավորներ և դա այն դեպքում, երբ 1919թ. Եվրոպական երկրների մեծ մասում կանայք նույնիսկ չունեին ընտրելու իրավունք: Աշխարհում առաջին կին դեպանը նշանակվեց Հայաստանի Առաջին Հանրապետությունը:

### Արտաքին հարաբերություններ

Հայաստանի առաջին հանրապետությունն իր արտաքին քաղաքականության հիմքում դրել էր բոլոր հայկական հողերի վերամիավորումը:

Անկախության հռչակումից հետո, երբ Հայաստանի Հանրապետությունն ընդամենը 12000 քառ. կիլոմետր էր, երկրի արտաքին դիվանագիտական քաղաքականության արդյունքն էր նաեւ, որ արդեն 1920թ. Հայաստանի Հանրապետությունն ուներ մոտ 70000 քառ. կիլոմետր տարածք: Չնայած դժվարին ներքին ու արտաքին խնդիրներին՝ Առաջին Հանրապետությունը ոչ թե տարածքներ կորցրեց, այլև նոր տարածքներ ձեռք բերեց: 1920թ. Անտանտի Գերագույն խորհուրդը

ճանաչեց Հայաստանի Հանրապետությունը, ընդ որում՝ այն բոլոր տարածքներով, որոնք փաստացի պատկանում էին Հայաստանի Հանրապետությանը այդ թվում նաեւ՝ Կարսի մարզը: Հայաստանի Հանրապետությունը ճանաչում ստացավ նաեւ ԱՄՆ-ի կողմից: Չնայած Հայաստանի Հանրապետության իշխանությունների ձգտումներին՝ բարիդրացիական հարաբերություններ հաստատել հարեւան երկրների, ինչպես նաեւ Ռուսաստանի հետ, այդ երկրները թշնամաբար էին տրամադրված Հայաստանի նկատմամբ և Հայաստանի իշխանություններին հաջողվեց միայն իրական բարեկամական հարաբերություններ հաստատել հարեւան Պարսկաստանի հետ:

Հայաստանի արտաքին քաղաքականության ձեռքբերումներից ամենակարեւորներից է նաեւ Սեւրի պայմանագիրը, որտեղ փաստացի Հայաստանի Հանրապետության իրավագործությանը տրվեց Արեւմտյան Հայաստանի մեծ մասը:

Կարելի է անվերջ թվարկել Հայաստանի Առաջին Հանրապետության ձեռքբերումները տարբեր ոլորտներում: Եվ, իրոք, աներեւակայելի է այն բոլոր ձեռքբերումները, որ Հայաստանն ունեցավ ընդամենը երկուսու կէս տարվա գոյության ընթացքում: Ներկայումս մենք պետք է ոչ միայն օրինակ վերցնենք Առաջին Հանրապետությունից, այլ չմոռանանք պատմության դասերը՝ Առաջին Հանրապետության կործանման պատճառը ոչ թե արտաքին ուժերն էին կամ սոցիալ-տնտեսական բարդ իրավիճակը, այլև մեր երկրի ներքին պառակտությունը:

Վահե ՀԱՐՈՒԹՅՈՒՅԱՆ

### Դաշնակցությունն է ազգի համար արյուն թափողը, հողը պաշտպանողը

Աշխատելով ՀՀ Դաշնակցության պաշտոնաթերթում, բազմիցս եմ ակա-  
նատես եղել, որ մարդիկ, հայտնվելով  
անելանելի վիճակում եւ չտեսնելով որեւէ  
էլք, վերջին հույսը համարելով ՀՀ Ար-  
ցախի կառույցը, գալիս են Դաշնակցու-  
թյան գրասենյակ: Օրերս Դաշնակցու-  
թյան գրասենյակ էր այցելել 75-ամյա Բո-  
րիկ Ավագյանը, ով, ինչպես պարզվեց  
մեր գրույցի ժամանակ, իր ապրած 75  
տարիների ընթացքում ակառատես է  
եղել պատերազմի դաժան օրերին, վե-  
րապրել է Սումգայիթն ու Մարաղան,  
բայց վաղվա օրվա հանդեպ տածած հա-  
վատով շարունակել է իր ընտանիքով  
ապրել Արցախում:

«Սումգայիթի մասին բոլորը գիտեն:  
Թողնելով ամեն ինչ՝ դատարկ ձեռքով  
դուրս եմ եկել Սումգայիթից, որտեղ ապ-  
րել եմ 30 տարի, այնուհետեւ բնակու-  
թյուն հաստատել Մարտակերտի շրջանի  
Մարաղա գյուղում: Մարաղայի պատմու-  
թյունն էլ է հայտնի բոլորին, թե ինչպես  
են մարաղեցիները, թողնելով տուն ու  
տեղ, կրկին դատարկաձեռն դուրս եկել  
Մարաղայից եւ փախել Ստեփանակերտ:  
Իմ ընտանիքը Մարաղայի ու Սումգայի-  
թի կոտորածներից մազապուրծ է եղել,  
բայց հարազատներիցս ոմանք աղբե-  
ջանական ոճիրի զոհ են դարձել Մարա-  
ղայում,- մեզ հետ գրույցում նշեց Բորիկ  
Ավագյանը: - Ունեմ 2 տղա, երկուսն էլ  
Արցախյան պատերազմի մասնակից:  
Տղաներիցս մեկը մինչ օրս ծառայում է  
բանակում, իսկ մյուս որդիս բնակվում է  
Բերձորում: Սեփական մաշկի վրա զգա-  
լով պատերազմի ողջ արհավիրքները,  
կրելով բազում դժվարություններ, կորց-  
նելով հարազատ մարդկանց՝ հաստատ-  
վեցինք Ստեփանակերտում: Մեզ պար-  
տադրված պատերազմի արդյունքում  
հաղթեցինք ազերիներին, իսկ մեր միակ  
նպատակն այն էր, որ Դարաբաղը միա-  
նա Մայր Հայաստանին: Մեր միակ մտա-

հոգությունը դա է եղել, սակայն մեր դե-  
կավարներն իրենց խոսքը չկատարեցին:  
Խոսքս ե՛ւ Ռոբերտ Քոչարյանին է վերա-  
բերում, ե՛ւ Սերժ Սարգսյանին: Իհարկե,  
նրանք նախագահ եղած ժամկետը սպա-  
ռեցին եւ սպառում են, բայց իրենց խոսքն  
այդպես էլ անկատար է մնում»: Իմ այն  
հարցին, թե ինչ հարցով է եկել Դաշնակ-  
ցության գրասենյակ, Բորիկ Ավագյանը  
տվեց հետեւյալ պատասխանը.



«Ես իմ մտահոգություններով եկել եմ  
այստեղ՝ միմիայն նրա համար, քանզի  
գտնում եմ, որ միայն դաշնակցական-  
ներն են մեր ազգի պաշտպանները: Ար-  
ցախում կուսակցություններ չատ կան,  
անգամ որոշ կուսակցությունների ղեկա-  
վարներ ավելի մեծ պաշտոններ են զբա-  
ղեցնում, եւ չի բացառվում, որ ավելի մեծ  
ազդեցություն կկարողանան ունենալ,

բայց ես նրա համար եմ եկել Դաշնակ-  
ցություն, որովհետեւ Դաշնակցությունն է  
ազգի համար արյուն թափողը, հողը  
պաշտպանողը: Ես դաշնակցական չեմ  
եւ չեմ եղել, բայց միշտ էլ նրանց արդար  
գործի պաշտպանն եմ եղել: Պատերազ-  
մի տարիներին անձամբ իմ աչքով եմ տե-  
սել, թե ինչպես են դաշնակցականները  
մարտնչում ու հերոսաբար զոհվում: Ես  
եկել եմ մտահոգությունս հայտնելու, ու

ցած մարդ էլ, երբ կարողում կամ լսում է  
այդ 6 կետերի մասին, հասկանում է, որ  
այդտեղ Արցախի համար ոչ մի կետ էլ  
չափեկան չէ: Այդ կետերը ենթադրում են  
հողերի հանձնում, այսինքն՝ թուրքը զա-  
եւ ապրի մեր հողում, մինչդեռ մենք եր-  
բեւե Բաքու կամ Սումգայիթ չենք վերա-  
դառնալու: Իրականում անհնարին է այդ  
ազգի հետ ապրելը: Ավելի լավ է մարդ  
այս իրավիճակում մինչեւ կյանքի վերջ  
ապրի, քան թե տա մի միջանցք՝ ինչպես  
համանախագահներն են ասում: Ես դեմ  
եմ համանախագահների որո- շումնե-  
րին, ու չեմ պատկերացնում, որ Արցախի  
ժողովուրդը երբեւէ կհամաձայնի համա-  
նախագահների ներկայացրած դրույթնե-  
րի հետ: Աղբբեջանցիները շատ լավ գի-  
տեն, որ եթե ժամանակին Արցախը Հա-  
յաստանին կապող միջանցքը լինել, Ար-  
ցախը կհայաթափվեր եւ իրենք հեշտու-  
թյամբ կկարողանային գրավել Արցախը:  
Համոզված եմ, որ այսօր Աղբբեջանը  
փորձում է նույն տրամաբանությամբ  
առաջնորդվել եւ ուզում է, որ Արցախը  
Հայաստանին կապող միջանցքը լինի,  
որպեսզի Արցախում ոչ մի հայ չմնա:

Մենք ոչ մի կտոր հող չպետք է տանք  
Աղբբեջանին: Չնայած իմ այս տարիքին՝  
թռնատեր եմ, շուտով ծոռնատեր եմ  
դառնալու, սակայն պատրաստ եմ մինչեւ  
կյանքիս վերջ կռվելու եւ հայրենիքս  
պաշտպանելու: Մեր ժողովրդին էլ կոչ եմ  
անում՝ եթե նորից համանախագահներն  
այդ հարցերը բարձրացնեն, խնդրում եմ  
կազմակերպված դուրս գանք եւ մեր  
ասելիքն ասենք: Ինչպես նաեւ կոչ եմ  
անում մեր նախագահին եւ ղեկավարու-  
թյանը, որ ոչ մի անգամ չհամարձակվեն  
նման որոշումներին համաձայնություն  
տալ»:

Պատրաստեց Անի ԱՉՍՅԱՆԸ

### Աշխատավարձերի բարձրացմանը զուգընթաց Արցախում սպասվում է գևաճ

Ձեզ ենք ներկայացնում «Ապառաժի»  
հարցազրույցը ԼՂՀ ազգային վիճակագ-  
րական ծառայության պետ, տնտեսագի-  
տական գիտությունների թեկնածու, դո-  
ցենտ Կարեն Ներսիսյանի հետ:

**- Ազգային վիճակագրական ծառայու-  
թյունն ինչպե՞ս կարող է օգնել տնտեսու-  
թյան զարգացման գործին:**

- Կա վիճակագրական ծառայության  
մասին օրենք, օրենքով լիազորված  
պարտականություններ, ըստ որի՝ իշ-  
խանություններին եւ հանրությանը ազ-  
գային վիճակագրական ծառայությունը  
պետք է հավաստի տվյալներ տա երկրի  
սոցիալ տնտեսական իրավիճակի վերա-  
բերյալ, այսինքն՝ պետք է ախտորոշվի  
իրավիճակը, հատկապես՝ տնտեսական,  
եւ հստակ տեղեկություններ տրվի՝  
առանց քաղաքական ենթատեքստերի:  
Գոյություն ունեն միջազգային ստան-  
դարտներ, որոնք մեծ կիրառություն  
ունեն, եւ մենք փորձում ենք բարեփոխել  
մեր համակարգը՝ անցնելով այդ ստան-  
դարտներին, որոնք ավելի ճշգրիտ են:  
Իհարկե, վիճակագրությունը ենթադրում  
է որոշակի շեղումներ, քանի որ կան  
որոշակի մեթոդներ: Մենք տվյալները  
հավաքագրում, ընդհանրացնում եւ ներ-  
կայացնում ենք. այլ հարց է, թե ինչ մե-  
թոդներով ենք այն հավաքագրում: Կա  
համատարած հաշվետվությունների եւ  
հետազոտությունների համակարգ: Մեր  
սոցիալ-տնտեսական իրավիճակի օբյեկ-  
տիվ գնահատականը կհանգեցնի տնտե-  
սության բարելավմանը եւ այդ ուղղու-  
թյամբ ճիշտ մեթոդների կիրառմանը:  
**- Ամեն տարի Արցախում արձանագր-**

**վում է տնտեսական աճ, սակայն ժողո-  
վուրդն իր վրա չի զգում: Ինչի՞ հետ է դա  
պայմանավորված:**

- Գոյություն ունեն տնտեսական աճ եւ  
տնտեսական զարգացում հասկացու-  
թյուններ. այսինքն՝ պետությունն իր  
առաքելությունն իրականացնելիս պետք  
է ապահովի ոչ միայն տնտեսական աճ,  
այլեւ տնտեսական զարգացում: Եթե  
պարզ տեսքով ներկայացնեն տնտեսա-  
կան զարգացումը՝ հավասար է տնտե-  
սական աճի եւ բարեկեցության գումա-  
րին: Անցումային երկրների պես՝ մենք  
փորձում ենք տնտեսական աճի ամբողջ  
ներուժը վերաբաշխել ողջ հասարակու-  
թյանը, որպեսզի բեռնաջուրը շատ  
չլինեն: Դա, իհարկե, շուկայի անկատա-  
րության մասին է խոսում: Մենք Արցա-  
խում ունենք սոցիալական օժանդակու-  
թյան մի քանի տասնյակ ձեւեր՝ պայմա-  
նավորված մեր ներքին առանձնահատ-  
կություններով եւ սոցիալապես անապա-  
հով խավերի ավելի ուրիշ կառուցված-  
քով. գոհված ազատամարտիկների ըն-  
տանիքներ եւ այլն:

Մենք պետք է այսօրվա իրավիճակը  
ճիշտ հասկանանք եւ ախտորոշենք. կան  
խնդիրներ, որոնք միանգամից չեն լուծ-  
վում:

**- Սույն թվականի հուլիս ամսից նա-  
խատեսվում է պետական կառավարման  
համակարգի աշխատակիցների աշխա-  
տավարձերի բարձրացում: Արդյո՞ք մեր  
այսօրվա տնտեսական աճը թույլ է տա-  
լիս գևաճ նման քայլի, եւ արդյո՞ք դա չի  
հանգեցնի գևաճի:**  
- Արդեն թե՛ ԼՂՀ-ում, թե՛ ՀՀ-ում

օրենքն ընդունված է: Ինձ թվում է՝ դրա  
նպատակը նախ եւ առաջ ոլորտում մաս-  
նագիտական ունակություններով օժտ-  
ված մասնագետների ներգրավումն է:  
Այսօր լավ մասնագետները գնում են դե-  
պի բիզնես ոլորտներ՝ աշխատավարձե-  
րի ցածր լինելու պատճառով: Ինչպես  
նաեւ կոռուպցիոն ռիսկերի նվազման  
համար է դա արվում:

Իսկ ինչ վերաբերում է՝ թե արդյո՞ք  
մենք դա կարող ենք մեզ թույլ տալ՝ ներ-  
կա տնտեսական իրավիճակից ելնելով,  
ապա պիտի ասեմ, որ այդ ամենն արվել  
է՝ հաշվի առնելով ներքին տնտեսական  
ռեսուրսների հնարավորությունները,  
մեր տնտեսության աճը: Ընթացիկ տա-  
րում սպասվում է նոր ներդրումային ըն-  
կերությունների գործարկում, գյուղատն-  
տեսության, որոշակի ծառայության  
ոլորտներում սպասվում է աճ:

Միանշանակ գևաճ լինելու է, քանի որ  
աշխատավարձը ծախս է եւ ցանկացած  
ծախս ենթադրում է որոշակի գևաճ: Սա-  
կայն գևաճի պատասխանատուն կենտ-  
րոնական բանկն է: Մեր երկու հանրա-  
պետությունների դրամական գոտում  
գների կայունության ապահովումը  
մշակվում եւ իրականացվում է կենտրո-  
նական բանկի կողմից:

**- Իսկ մասնավոր հատվածի մասին  
ի՞նչ կասեք: Ինչպե՞ս կազդի գևաճը  
նրանց վրա:**

- Մասնավոր հատվածը դրա համար  
էլ կոչվում է մասնավոր, որ նրանք են  
որոշում, թե ինչպես կառուցեն իրենց  
բիզնեսը. դա նրանց խնդիրն է, շուկայի  
օրենքն է դա: Այսօր մենք ունենք աշխա-

տավարձի քաղաքականության իրակա-  
նացման մեկ սահմանափակում. դա  
նվազագույն ամսական աշխատա-  
վարձն է:

**- Հաճախ նշվում է մի շարք ոլորտնե-  
րում մասնագետների պակասի մասին,  
սակայն Արցախի բուհերի շրջանա-  
վարտներն իրենց մասնագիտությամբ  
չեն կարողանում աշխատանք գտնել:  
Արդյո՞ք ազգային վիճակագրական ծա-  
ռայությունն զբաղվում է տարբեր ոլորտ-  
ներում մասնագետների թվի, անհրա-  
ժեշտ մասնագետների եւ նրանց քանա-  
կի հարցով:**

- Դա մեր գործառնությունն է, դրանով  
պետք է զբաղվի կրթության նախարա-  
րությունը:

**- Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ ազգային վի-  
ճակագրական ծառայության հրապա-  
րակած թվերը բնակչության մոտ վստա-  
հություն չեն ներշնչում:**

- Աշխարհի ցանկացած երկրում այդ-  
պես է: ՀՀ ազգային վիճակագրական  
ծառայությունը համարվում է տարա-  
ծառայանում ամենակայացածներից մե-  
կը. դա միջազգային կառույցների գևա-  
հատականն է, սակայն, չգիտես ինչու,  
հրապարակած թվերը բնակչության  
մոտ վստահություն չեն ներշնչում: Մենք  
ուղղակի պետք է մեր ամենօրյա աշխա-  
տանքով ապացուցենք հակառակը:

Պատրաստեց Արմինե ՆԱՐԻՆՅԱՆԸ

### Ազատամարտիկ կնոջ պատմությունը Aparaj.am-ի հարցազրույցը Գայանե Առստամյանի՝ Բերդաձորի Գայանեի հետ

Հայ կինը միայն առյուծածին մայր չէ. հայ կինը օրհասական պահին կանգնել գիտե իր զավակի ու եղբոր կողքին, եւ պատրաստ է գեւը վերցնել, եթե դրա անհրաժեշտությունը կա: Արցախյան պատերազմում քաջագործություններ եւ հայ զինվորին առաջին գծում օգնություն ցուցաբերած քաջասիրտ կանանց մասին բազմիցս ենք առիթ ունեցել լսել կամ կարդալ, սակայն երբ անձամբ ես հանդիպում գեղեցկադեմ ու քնքուշ հայուհու, ով համեստորեն լռում է իր արած գործերի մասին, ինքը էլ ես դժվարությամբ գուպում հուզմունքը: Բերդաձորի Գայանեին (Գայանե Առստամյանին բոլորն այդպես են անվանում) շատերն են ճանաչում: Գայանեի սիրագործությունների մասին բազմիցս էի լսել, եւ միայն վերջերս բախտ ունեցա նրան անձամբ տեսնել եւ զրուցել հետը: Պատերազմի թոհ ու բոհով անցած հմայիչ հայուհին մեր զրույցի ընթացքում բավականին հուզված էր ու շփոթված: Ինձ համար դա անակնկալ չէր, քանզի պատերազմի թոհ ու բոհով անցած հերոսներից ոչ բոլորն են սիրում խոսել իրենց անցած ուղու կամ արածի մասին: Ըստ նրանց՝ դեռ խոսելու ժամանակը չի, սակայն նրանք գտնում են, որ իրենց պարտքն է սերունդներին թողնել ճշմարտությունը, որպեսզի իրենց կիսատ թողած գործը շարունակեն:

Գայանե Առստամյանին Բերդաձորի Գայանե անունն իզուր չի տրվել: Գայանեն իր ուղին Արցախյան պատերազմում սկսել է հենց Բերդաձորից. «Չնայած պատերազմից բավական տարիներ են անցել, բայց հաճախ եմ այցելում Բերդաձոր եւ կապս Բերդաձորի հետ չեմ կտրել,- մեզ հետ զրույցում նշեց Գայանեն,- ես իմ առաքելությունն ավարտված չեմ համարում թե Բերդաձորում եւ թե ընդհանրապես: Այդ իսկ պատճառով՝ Բերդաձորի ազատագրումից հետո հաճախակի եմ այցելում Բերդաձոր: Նախ՝ այնտեղ շատ ընկերներ ունեմ եւ, իհարկե, հիշողություններն են տանում ինձ այնտեղ: Ես համոզված եմ, որ առաջիկայում նույնպես իմ ուժերի ներածին չափով օգնելու եմ այդ ձորակին: Եվ, ընդհանրապես, մենք բոլորս միահամուռ ուժերով պետք է ամեն ինչ անենք այդ ձորակի եւ առհասարակ Արցախի բարգավաճման համար: Ես այսօրվա մեր գյուղերի վիճակը գնահատում եմ անբավարար: Գտնում եմ, որ վարչարարական աշխատանքը շատ թերի է, գյուղերի վիճակը՝ անբավարար: Այդ գյուղերում եռանդ չկա: Այն հնարավորությունները, որ կան այդ հողում, չեն օգտագործվում նպատակային: Իսկ այդ հողն ունի անսահման մեծ հնարավորություններ՝ տնտեսական առումով, ինչը կարող է դառնալ ապագայի տեսիլք»:

Գայանեն 1989 թվականին ներգրավվել է Արցախյան շարժման ակտիվիստների խմբերում եւ փորձել իր համեստ լուծման ունենալ հայ ժողովրդի արդար պահանջի իրագործմանը: «1988-89 թվականներին, երբ սկսվեց Արցախյան շարժումը, բոլոր այն մարդիկ, ովքեր հայրենասեր էին, իրենց պարտքն էին համարում ինչ-որ մի լուծման ներդրել ընդհանուր շարժման մեջ: Ոմանք ձեռնամուխ են եղել խնդրագրեր եւ դիմումներ գրելուն, կամ հացադուլներ անելուն, իսկ ոմանք էլ ձեռնամուխ են եղել կոնկրետ գործեր կատարելուն. ես այդ մարդկանց թվին եմ դասվում: Ես գիտակցում էի, որ հնարավորություններս շատ համեստ են. ի վերջո կին եմ: 89 թվականին արդեն իսկ ձեռավորվել էր մի խումբ, ովքեր միեւնույն գաղափարի կրողներ էին: Եվ այդ

օրերին անհրաժեշտ էր, որպեսզի Բերդաձորում կապի համակարգի վրա վստահելի մեկը չստեր: Այդպես ես հայտնվեցի Բերդաձորում 89 թվականի դեկտեմբերից մինչեւ 91 թվականի մայիսի 15-ը, երբ կայացվեց տիրահռչակ Կոլցո ռազմագործողությունը, որի արդյունքում Արրբեջանի ՕՍՕՆ-ի եւ Սովետական բանակի համատեղ ուժերով հայկական գյուղեր էին դատարկվում»: Չնայած Կոլցո ռազմագործողությունից 23 տարի է անցել, բայց Գայանեի հուշերում դրանք անջնջելի հետք են թողել: Եվ խոսելով այդ օրերի մասին՝ Գայանեն դժվարությամբ էր զսպում իր արցունքները. «Կոլցո ռազմագործողության հետ կապված հիշողություններս շատ վառ են մնացել: Գերեզարված կանայք շրջապատված էին թուրք ՕՍՕՆ-ի եւ ռուս զինծառայողների կողմից: Գյուղի տղամարդկանց տարել էին Լաչին, որոշներին



տանջամահ էին արել: Դրանք շատ ծանր հիշողություններ են, որոնք հնարավոր չի ջնջել ուղեղից: Հենց Կոլցո ռազմագործողությունից մենք շատ բան հասկացանք: Մենք հասկացանք, որ պետք է ավելի ուժեղ լինենք, ավելի զինված, ավելի կազմակերպված, որպեսզի թույլ չտանք, որ կրկնվի պատմությունը, ըստ որի՝ մեր ազգն անընդհատ տուժողի դերում է հայտնվել կամ տարհանվել է: Կոլցո ռազմագործողության արդյունքում դատարկվեց նաեւ Բերդաձորը, եւ ես էլ մյուսների հետ դուրս եկա գյուղից: Շուշիի ազատագրումից հետո ազատագրվեց Բերդաձորն ու Զաշաթաղը (Լաչինը), եւ ես կրկին վերադարձա, քանզի ես ոչ միայն զինվոր էի. պարզապես շատ սիրեցի տեղի մարդկանց, ունեցա շատ ընկերներ, որոնց հետ մինչ օրս կապ եմ պահում»:

Ըստ Գայանեի՝ հայրենասիրությունն անձնագոհություն է պահանջում, պահանջում է անքուն գիշերներ կամ վտանգի տակ մնալու զգացողություն. «Առհասարակ, մեր բոլորի հայրենասիրությունը գալիս է մեր ծնողներից: Ծնողներս շատ մեծ դժվարությամբ ընդունեցին այն փաստը, որ ես մեկնում եմ Բերդաձոր: Մայրս իմ պատճառով ինձ ֆարկտ է տարել, բայց, միեւնույն է, ժամանակն էր թելադրում մեր գործողությունները: Ժամանակն ինքն էր քեզ բերում եւ կանգնեցնում այն ճանապարհին, որով դու պետք է անցնեիր: Ես նստում էի կապի մոտ, տղաները հերթափոխով ճանապարհներն էին հսկում, քանզի ադրբեջանցիները պարբերաբար հարձակվում էին: Հիմա, երբ հիշում եմ այդ վախն ու ապրումները, հասկանում եմ, որ պետք չէր իրենցից վախենալ, որովհետեւ մի փոքր դի-

մադրության արդյունքում նրանք արդեն չկային»:

1991 թվականին Գայանեն վերադառնում է Ստեփանակերտ, որտեղ շտաբին կից ստեղծվում է 61 կապը: Եվ Գայանեն երկու աղջիկների հետ ծառայության է անցնում 61 կապում. «Ես 61 կապում էի, երբ Արկադի Տեր-Թադեւոսյանը կոչ արեց՝ կանանց ներգրավել պատերազմում: Արդեն թե՛ մարտեր էին ընթանում, զոհվում էին մեր տղաները, եւ չէր բացառվում, որ եթե ժամանակին ցույց տրվեր բժշկական գրագետ օգնություն՝ հնարավոր կլիներ նրանցից ոմանց կյանքը փրկել: Հայաստանում ստեղծված «Սպիտակ» փրկարարական ծառայությունից եկան եւ Շուշիի ուսումնական կենտրոնում կազմակերպեցին ուսումնական դասընթացներ: 13 աղջիկ անցանք այդ դասընթացները: Մեզ ներգրավեցին Շուշիի գունդ եւ Շուշիի գնդի կազ-

մում մենք անցանք ռազմական գործողությունների ողջ ճանապարհով: Սկզբում շատ դժվար էր: Դժվարանում էի ներարկիչ բռնել, դեռ ավելին՝ մութ տեղ պետք է կարողանայի երակ մտնել: Պահ է եղել, երբ ստացվել է, պահ է եղել՝ չի ստացվել: Ես այն ժամանակ մտածում էի, որ եթե անգամ մի հայ զինվորի կյանք կարողանամ փրկել, ուրեմն ռազմի դաշտում իմ գտնվելն արդարացված է: Կարող եմ հստակ ասել՝ մի կյանք չէ, որ փրկել ենք, մեր աշխատանքն արդյունք ունեցել է»:

Գայանեն կրթությամբ պատմաբան է, եւ, ինչպես ինքն է նշում, չնայած իր ռոմանտիկ լինելուն՝ կյանքում իրատես է, եւ Արցախյան շարժման հենց սկզբնական փուլում է գիտակցել, որ կոչերով հող չի ազատագրվելու, որ հողի ազատագրման համար արյուն է թափվելու: Եւ առաջին գիծ է մեկնել առանց վարանելու. «Երբ դու անդադար ստրեսի մեջ ես գտնվում, դադարում ես մտածել քո հաջորդ քայլի մասին, սկսում ես ապրել այդ վարկյանով, ինչքան որ ապրում ես: Պատերազմի ժամանակ ժամանակը լրիվ այլ ձեւ է գնում՝ հակառակ ֆիզիկայի օրենքների: Եթե դու տեսնում ես, որ քո հարեանի երեխան պատահական ռումբի պայթյունից ինչպես է գլխատվել, դու արդեն վախենալու կամ մտածելու ոչինչ չես ունենում պատերազմի դաշտ գնալու հետ կապված: Այսինքն՝ մահանալու նույն շանտերը դու ունես քո տանը նստած: Իսկ պատերազմի դաշտում լինելով չի բացառվում, որ կկարողանաս մի հայ զինվորի կյանք փրկել, կամ մյուսների հետ միասին կանխել թշնամու առաջխաղացումը: Ինձ թվում է՝ մենք բոլորս այդ հոգեբանությամբ ենք գնացել պա-

տերազմ»:

Գայանեի համար ամենածանր մարտը Սանասարի (Նախկին Կուբաթլու) մարտերն էին:

«Ահավոր դժվար մարտ է եղել Նախկինում Կուբաթլուի մարտերը: Խժաբերդ գյուղի մոտակայքում մարտերը շատ թե՛ էին: Այդտեղ դիվերսիոն խմբի գործողության ընթացքում զոհվեց մեր ընկերուհիներից մեկը՝ Մարգարիտան. նա դիպուկահար էր: Նույն մարտում մենք երկու կին վիրավոր էլ ունեցանք: Կարինեն գլխուղեղից վիրավորվեց, ներկայումս առաջին կարգի հաշմանդամ է, եւ Մարգարիտան վիրավորվեց»:

Ըստ Բերդաձորի Գայանեի՝ մարտական գործողություններում մեծ դերակատարություն կարող էր ունենալ ընդհանուր մթնոլորտը. «Համոզված կարող եմ ասել, որ մեր տղաներն իրենց հաստատ հանգիստ էին գտնում, որ մեկն իրենց հետեւում կանգնած է քիստը կամ առաջին բուժօգնության պարագաները ձեռքին: Այսինքն, եթե փրկվելու հնարավորություն ունենային, ուրեմն իրենք փրկվելու էին: Մենք տղաների հետ եղել ենք առաջին գծում եւ ընդամենը մեկ քայլ ենք նրանցից հետ կանգնած եղել»:

Գայանեն գտնում է, որ մենք մեր նպատակների միայն մի փուլին ենք դեռ հասել. «Մենք հասել ենք մեր նպատակների միայն մեկ փուլին: Իմ կարծիքով՝ կան շատ մեծ սխալներ: Իմ գերագույն նպատակն այս ամենի մեջ միացյալ Հայաստան ստեղծելն է: Մենք դեռ անելիք ունենք, որը պետք է շարունակենք եւ թողնենք մեր գալիք սերունդներին: Աստված մի արասցե՝ նորից անհրաժեշտություն լինի առաջին գծում հայտնվելու: Առաջին գիծ գնացողը չպետք է առողջական կամ տարիքային խնդիր ունենա: Չգիտեմ, թե այդ ժամանակ առողջական ինչ վիճակում կլինեմ, բայց մի բան հստակ է՝ ես ժողովրդիս կողքին եմ լինելու»:

Պատերազմի տարիներին Գայանեի արած գործը պետության կողմից անկատ չի մնացել: Նա պարգևատրվել է «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշանով: «Իմ արածի համար ես շատ ավելի ճոխ պարգևատրում եմ ստացել պետության կողմից: Գտնում եմ, որ իմ արածի հարյուրապատիկն արել են մեր տղաները: Ես պարգևը մեծ սիրով եմ ընդունել. ստացել եմ «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշան եւ Շուշիի ազատագրման մեդալ», - այսպես է ասում Գայանեն:

Շուշիի ազատագրման ժամանակ Գայանեն դեռ ծառայելիս է եղել 61 կապում: Ըստ նրա՝ իրենք գիտեին, որ ինչ-որ գործողություն է կատարվելու: Սակայն հետո են հասկացել, որ պատմական գործողությունների մասնակից են դարձել:

«Առհասարակ չեմ սիրում խոսել պատերազմում իմ տեսածի մասին: Հնարավոր է, որ դեռ ժամանակը չի խոսելու: Բայց չի բացառվում, որ մի օր պատերազմում տեսածս հավաքագրեմ եւ որպես հիշողություններ տպագրեմ»:

Ես իմ աշխատանքը շատ ծավալուն չեմ գնահատում: Հնարավոր է, որ ես այն փոքր քարն էի, որը չի թողել, որ հսկա քարերը փլվեն: Մեր տղաները այդ հսկաներն են, որոնց կողքին մենք կանգնել ենք եւ թույլ չենք տվել, որ մեր հսկաները փլվեն», - իր արած աշխատանքն այսպես գնահատեց հմայիչ հայուհին եւ հավելեց, - մենք ունենք մի նպատակ՝ հայ ժողովրդի բարգավաճումը մեր հողի վրա, ինչի համար մենք շատ դաժան ճանապարհ ենք անցել»:

Հայաստանի Առաջին Հանրապետության տարեգրություն



Հայաստանի Առաջին Հանրապետության կառավարության երկրորդ կաբինետի անդամները: Ա. Սահակյան, Ա. Խատիսյան, Զ. Արարատյան, Ն. Աղբալյան, Ա. Գյուլխանդանյան, Ս. Արարատյան



Կաթողիկոս Գեորգ Ե օրհնում է կամավորականներին

- 1918թ. մայիսի 21-27-ին Սարգարապատում, Բաշ Ապարանում, Ղարաքիլիսայում հայկական զորամիավորումները հաղթեցին Արեւելյան Հայաստան ներխուժած թուրքական մեծաքանակ զորքին:
- 1918 թ. մայիսի 28-ին հռչակվեց Հայաստանի առաջին հանրապետությունը:
- 1918թ. հուլիսի 24-ին հրապարակվեց ՀՀ անդրանիկ կառավարության կազմը. վարչապետ՝ Հովհաննես Զաքարյանի (Իգիթխանյան), արտաքին գործերի նախարար՝ Ալեքսանդր Խատիսյան, ներքին գործերի նախարար՝ Արամ Մանուկյան, ֆինանսների նախարար՝ Խ. Կարճիկյան, զինվորական նախարար՝ գեներալ Հովհաննես Հախվերդյան, արդարադատության նախարար՝ Գ. Պետրոսյան:
- 1918թ. հուլիսի Հայաստանի ազգային դրոշ ընդունվեց եռագույնը (կարմիր, կապույտ, կարմրադեղին):
- 1918թ. օգոստոսի 1-ին Երեւանի քաղաքային ակումբի դահլիճում տեղի ունեցավ Հայաստանի խորհրդի անդրանիկ կոնսուլ:
- 1918թ. սեպտեմբերի 3-ին Երեւանի կազմեցին կոալիցիոն կառավարություն:
- 1918թ. դեկտեմբերի 5-ին սկսվեց հայ-վրացական պատերազմը: Հայկական բանակը Դրոյի գլխավորությամբ կարճ ժամանակում Վրաստանի հասցրեց ծանր հարված:
- 1919թ. փետրվարին երկրի ծանր դրությունը Հայաստանի խորհրդին ստիպեց դիմել Եվրոպայի եւ ԱՄՆ-ի օգնությանը:
- 1919թ. մայիսի 16-ին ՀՀ նախարարների խորհուրդը Երեւանում համալսարանի հիմնելու վերաբերյալ որոշում ընդունեց:

- 1919թ. հունիսի 21-23-ը Հայաստանում կայացան առաջին եւ միակ խորհրդարանական ընտրությունները: Ընտրվեցին խորհրդարանի 80 անդամներ (այդ թվում՝ 3 կին), որոնցից 72-ը ՀՀ անդամներ էին, 4-ը՝ եսեռներ, 1-ը՝ անկուսակցական, 2-ը՝ թուրքաթարներ եւ 1-ը՝ եզդի:
- 1919թ. հուլիսի Հայաստանում բռնկվեց թուրք-թաթարական ընդհանուր խռովություն, որի համար Թուրքիան եւ Ադրբեջանը ջանք չէին խնայել:
- 1920թ. հունվարի 19-ին Ատանտի Գերագույն խորհուրդը փաստացիորեն ճանաչեց Հայաստանի անկախությունը:
- 1920թ. հունվարի 31-ին Ալեքսանդրապոլի (այժմ՝ Գյումրի) առետրային դարոցի շենքում մեծ շուքով կատարվեց Հայաստանի համալսարանի բացման հանդիսավոր արարողությունը:
- 1920թ. մարտին ստեղծվեց երզնյալ ատենակալների դատարանը:
- 1920թ. ապրիլին ստեղծվեց ազգային դրամը:
- 1920թ. հուլիսին ՀՀ կառավարությունը հաստատեց ՀՀ զինանշանը, որը հեղինակել էին Ալեքսանդր Թամանյանը եւ Հակոբ Կոչոյանը: Օրհներգ ընդունվեց Միքայել Լալբանդյանի «Մեր հայրենիք» երգը, որի երաժշտության հեղինակն էր Բարսեղ Կանաչյանը:
- 1920թ. օգոստոսի 10-ին Փարիզի արվարձան Սեւրում Առաջին համաշխարհային պատերազմում հաղթած երկրների եւ սուլթանական Թուրքիայի ներկայացուցիչների միջեւ կնքվեց հաշտության պայմանագիր: Նրանով Հայաստանը Թուրքիայի կողմից ճանաչվում էր իբրեւ ազատ եւ անկախ պետություն:

- 1920թ. աշնանը հայկական բանակն ուներ 40.000 զինվոր:
- 1920թ. սեպտեմբերի 23-ին սկսվեց հայ-թուրքական պատերազմը: ՀՀ-ի վրա հարձակված թուրքական բանակի հարվածային ուժը Զյազիմ Կարաբեքիրի 15-րդ կորպուսն էր, որն ուներ 30 հազար զինվոր:
- 1920թ. հոկտեմբերի 14-ին խորհրդային Ռուսաստանի ղեկավարությունը որոշում ընդունեց Հայաստանը խորհրդայնացնելու մասին:
- 1920թ. հոկտեմբերի 30-ին թշնամի գրավեց Կարսը՝ գերելով մոտ 3.000 զինվորների եւ զինվորական ու քաղաքացիական բարձրաստիճան անձանց: Երեք օր անընդմեջ թուրքերը Կարսում զբաղված էին իրենց հատուկ վայրագություններով, որոնց զոհ գնացին մոտ 6000 հայեր:
- 1920թ. նոյեմբերի 18-ին կնքվեց զինադադարի համաձայնագիր, որի պայմանները խիստ ծանր էին ՀՀ-ի համար:
- 1920թ. նոյեմբերի 23-ին Համազասպ (Համո) Օհանջանյանի կառավարությունը հրաժարական տվեց եւ կազմվեց նորը՝ Սիմոն Վրացյանի գլխավորությամբ: Այն կոալիցիոն էր եւ կազմված էր եսեռների հետ:
- 1920թ. նոյեմբերի 24-ին Ալեքսանդրապոլում սկսվեցին հայ-թուրքական հաշտության բանակցություններ, որոնք ավարտվեցին դեկտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը, այն բանից հետո, երբ Հայաստանն արդեն խորհրդայնացել էր, իսկ ՀՀ կառավարությունը հրաժարվել էր իշխանությունից: Ալեքսանդրապոլի պայմանագրով Թուրքիային էր անցնում 1914թ. դրությամբ Արեւելյան Հայաստանի մեջ մտնող ավելի քան 20.000 կմ<sup>2</sup> տարածք՝ Կարսը, Սարիղամիշը, Կաղզվանը, Արդահանը, Օլթին, Սուրմա-

- լուի գավառը: Փաստորեն, հայ-թուրքական սահմանն անցնելու էր Ախուրյան եւ Արաքս գետերի հունով: Իսկ Նախիջեանի, Շարուրի, Շահթախի շրջանները ժամանակավորապես հանձնվում էին Թուրքիային, մինչեւ որ այնտեղ կանցկացվեր հանրաքվե, որին Հայաստանը չպետք է մասնակցեր:
- 1920թ. նոյեմբերի 29-ին խորհրդային բանակը եւ Բաքվում կազմավորված Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեն, որի նախագահն էր բոլշեւիկ Սարգիս Կասյանը, մտան Իջեւան, որտեղ հայտարարեցին դաշնակցական կառավարության տապալման եւ Հայաստանի խորհրդայնացման մասին:
- 1920թ. դեկտեմբերի 2-ին Երեւանում ստորագրվեց համաձայնագիր: Դրանով Հայաստանը հռչակվում էր խորհրդային սոցիալիստական հանրապետություն, իշխանությունը անցնում էր ժամանակավոր ռազմահեղափոխական կոմիտեին:
- 1920թ. դեկտեմբերին ռուսների կողմից ձերբակալվեցին ՀՀ բանակի 1.000-ից ավելի սպաներ, այդ թվում՝ Թովմաս Լազարբեկյանը, Մովսես Սիլիկյանը եւ ուրիշներ, որոնց ոտքով քշեցին Ալավերդի՝ ճանապարհին նրանցից ոմանց սպանելով, բոլորին ծաղր ու ծանակի ենթարկելով: Այս ձերբակալվածներին ուղարկեցին Բաքվի եւ Ռուսաստանի բանտեր: 1921թ. փետրվարին Դիլիջանի շրջանում գնդակահարվեցին Սարգարապատի ճակատամարտի մեծ թվով հերոսներ, այդ թվում՝ Դանիել Բեկ-Փիրումյանը: Նրա եղբայր Պողոս (Պավել) Բեկ-Փիրումյանը, չլինելով կտտանքների ու նվաստացումների, ինքնասպանություն գործեց:



Հայաստանի Առաջին Հանրապետության ազգային դրամը



Հայաստանի Առաջին Հանրապետության տարածքը 1920 թվականին

**«Ապառաժ» երկշաբաթաթերթ**  
 Ստեփանակերտ, Կոմունյանց 17,  
 հեռ. 97 38 43, E-mail: info@aparaj.am  
 Կայքէջ՝ [www.aparaj.am](http://www.aparaj.am)

Նյութերի համար պատասխանատու են հեղինակները: Թերթը կարող է տպագրել նաեւ նյութեր, որոնցում արժանապատեհ տեսակետները չի կիսում: Տպագրվում է Ստեփանակերտի «ԴԻՉԱԿ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ում: Գրանցման վկայական՝ 04: Տպաքանակը՝ 500: Գինը՝ 100 դրամ:

**Խմբագրական խորհուրդ**